Azg
armenian daily

21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2001 ՈՒՐԲԱԹ 235 (2439)

Ադրբեջանական դասվիրակություն Փարիզում

ՓԱՐԻԶ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր սկսվող Ֆրանս-ադրբեջանական բանակցություններում հիմնական ուշադրությունը կդարձվի Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանը եւ երկկողմ տնտեսական համագործակցության զարգացմանը: Պաշտոնական այցով Փարիզ ժամանած Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեն այսօր հանդիպում կունենա Ֆրանսիայի վարչապետ Լիոնել Ժոսպենի եւ Ֆրանսիայի խորհրդարանի երկու պալատների նախագահների հետ: Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հետ միասին Ֆրանսիան ԵԱՀԿ-ի՝ Լեռնային Ղարաբաղի խնդրով Մինսկի խմբի անդամ է եւ ակտիվորեն մասնակցում է այդ հիմնախնդրի լուծմանը:

Երկօրյա այցի շրջանակներում տեղի կունենա Ֆրանս-ադրբեջանական խաղը հանձնաժողովի նիստ, որի համանախագահ է Ռասիզադեն: Նրան ուղեկցում են երեք նախարարներ, Ազգային բանկի եւ Ադրբեջանի պետնավթընկերության նախագահները: Ֆրանսիան, ի հաշիվ նավթամթերքների ներմուծման, դարձել է գնումների ծավալի գծով Ադրբեջանի երրորդ առեւտրական գործընկերը:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

«Քոչարյանի այցն Իրան շրջադարձային է լինելու»

Դեկտեմբերի 25-27-ը Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը պաշտոնական այցով կլինի Իրանի Իսլամական Հանրապետությունում: Այցի նպատակների եւ երկկողմ հարաբերությունների մասին խոսեցինք Հայաստանում Իրանի դեսպան Մոհամադ Ֆահրադ Քոլեյնիի հետ:

- Պրն դեսպան, նախագահի պաշտոնական այցի նախօրեին ինչպես եք բնութագրում հայ-իրանական հարաբերությունները:

- Հայաստան-Իրան կապերը բավականին ամուր են: Առկա է երկկողմ սերտ համագործակցություն եւ քաղաքական, եւ տնտեսական, եւ մշակութային ոլորտներում: Այդ հարաբերությունները կարեւոր են երկու երկրների համար էլ, ուստի ամեն ջանք պետք է գործադրենք դրանք բարձր մակարդակի վրա պահելու համար:

- Պրն Քոլեյնի, Ռոբերտ Քոչարյանը մոտ ապագայում պաշտոնական այցով կլինի Իրանում: Ի՞նչ համատեղ ծրագրեր կան իրականացնելու եւ կոնկրետ ի՞նչ պայմանագրեր կամ համաձայնագրեր են ընդունվելու:

- Ինչպես նշեցի, երկու երկրների հարաբերությունները բավականին ջերմ են: Երկկողմ համագործակցությունը բնականաբար ծնում է նաեւ երկկողմ ակնկալիքներ: Կարեւորն այն է, որ այդ համագործակցությունը լինի երկարաժամկետ: Իմ կարծիքով, Ռոբերտ Քոչարյանի այցն Իրան շրջադարձային է լինելու երկու երկրների համար էլ: Հուսով ենք, որ ձեռք բերված տնտեսական եւ քաղաքական կապերով կզարգացնենք երկու երկրների ժողովուրդների կապերը: Հայաստանի ղեկավարությունը ճկուն քայլեր կկատարի վերացնելու այցագրային ռեժիմը: Այդ առումով Իրանն արդեն հայտնել է իր պատրաստակամությունը: Կան ստորագրվելիք պայմանագրեր, որոնք առնչվում են համատեղ սեյսմիկ պաշտպանությանը եւ գիտակրթական ոլորտին:

Գ. Ա.

ԱՅՑ

Ճապոնիայում բացվելու է հայկական ոսկերչական ապրանքների ցուցահանդես

Շարունակվում են Ռոբերտ Քոչարյանի հանդիպումները

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը Տոկիոյում հանդիպում է ունեցել Ճապոնիայի կայսր Ակիհիտոյի հետ:

Հանդիպումը կրել է արարողակարգային բնույթ:

Հանրապետության նախագահը հանդիպել է նաեւ Ճապոնիայի արտաքին առեւտրի կազմակերպության /JETRO/ եւ Միջազգային համագործակցության ճապոնական բանկի /JBIC/ ղեկավարների հետ:

Արտաքին առեւտրի կազմակերպության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել 2002 թ. Ճապոնիայում կազմակերպել հայկական ոսկերչական ապրանքատեսակների ցուցահանդես, նախատեսվում է նաեւ երեւանում բացել տեղեկատվական մարկետինգի կենտրոն:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը երեկ այցելել է Ճապոնիայի Լիբերալ-դեմոկրատական կուսակցության կենտրոնական գրասենյակ, որտեղ կազմակերպված արարողության ժամանակ ներկայացվել է հայ-ճապոնական բարեկամության նորաստեղծ խորհրդարանական խումբը: Խմբին անդամակցում են Ճապոնիայի խորհրդարանի 35 անդամներ:

Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը այսօր կայցելի Ճապոնիայի հնագույն մայրաքաղաք Կիոտո:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ադրբեջանը չի կարող ԱՄՆ օգնությունն օգտագործել Հայաստանի դեմ

Ֆրանկ Փալոն. «Ադրբեջանում «Ալ Ղաիդայի» գործունեությունը ապառնալիք է ԱՄՆ-ի համար»

Ամերիկայի հայկական համագումարի եւ ՀՅԴ Հայ դատի վարչնգտնյան գրասենյակներից ստացված հաղորդագրությունները գոհունակությամբ տեղեկացնում են, որ երեկ Մ. Նահանգների կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հաստատել է 2002 թ. ֆինանսական տարվա արտաքին օգնությունների մասին զեկույցը, որը ներառում է Հայաստանի ավելի քան 90 միլիոն դոլարի օգնությունը, ինչպես նաեւ թիվ 907 հոդվածի առկախման նկատմամբ հայամետ կոնգրեսականների պահանջած սահմանափակող դրույթը: Այդ դրույթը սահմանում է, որ Ադրբեջանը չի կարող Մ. Նահանգներից իր ստանալիք օգնությունն օգտագործել Հայաստանի դեմ: Բացի դրանից, զեկույցն իրավունք է վերապահում կոնգրեսականներին մյուս՝ 2003 տարվա արտաքին օգնության փաթեթը քննելիս վերստին անդրադառնալ թիվ 907 հոդվածի առկախման հարցին: Զեկույցը նախատեսում է նաեւ, որ բացի վերոհիշյալ 90 մլն դոլարից, Մ. Նահանգներն առաջիկա տարի Հայաստանին տրամադրելու են 4 մլն դոլարի ռազմական օգնություն ու եւս 300 հազար դոլար՝ մարզումների (թրեյնինգ) համար:

Զեկույցի քննարկման ընթացքում հնչել են բազմաթիվ ելույթներ, որոնցից ուշագրավը եղել է Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Ֆրանկ Փալոնինը: Վերջինս անդրադարձել է Ադրբեջանի տարածքում «Ալ Ղաիդա» ահաբեկչական կազմակերպության բջիջների գործունեությանը եւ նշել, որ այդ կազմակերպության ու նրա անդամների՝ Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական գործողությունների մասնակցության մասին կան հստակ տվյալներ: «Այդ ահաբեկչական կազմակերպության բջիջներն ուղղակի սպառնալիք են ոչ միայն հայերի եւ Լեռնային Ղարաբաղի, այլեւ՝ մեզ համար», ասել է նա:

Զեկույցը ընդունվել է 66-ի դեմ 357 ձայնով:

Տեղեկացնենք, որ Վրաստանին նույնպես 90 մլն դոլարի օգնություն է քվեարկվել, այնինչ Ադրբեջանին տրամադրվելիք օգնության չափը չի նշվել...

Ս. Իվանով. «Վրաստանը պատրաստ չէ ահաբեկչության դեմ համատեղ պայքարի»

ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը Լոնդոնում հայտարարել է, որ Վրաստանի իշխանությունները պատրաստ չեն Կովկասում ահաբեկչության դեմ Ռուսաստանի հետ համատեղ պայքար մղելու: «Մոսկվան չի տեսնում վրացական իշխանությունների ջանքերը՝ վերականգնելու Պանկիսի կիրճի վերահսկողությունը: Ահաբեկիչների զավթած Վրաստանի այս տարածքից են գնում Չեչնիայում կռվող ահաբեկիչներին եւ վարձկաններին ֆինանսական, տեղեկատվական եւ այլ սնուցումներ: Ահաբեկչության դեմ պայքարի քննարկումներ անցկացնելը լավ է այն դեպքում, երբ մյուս կողմը եւս պատրաստ է անելու ինչ-որ բան», ասել է Իվանովը:

Երեկ Թբիլիսի է ժամանել ՌԴ Պետդումայի ԱՊՀ հարցերով հանձնաժողովի նախագահ Բորիս Պասուխովը՝ վրացական իշխանությունների հետ բանակցություններում նախապատրաստելու ռուս-վրացական շրջանակային նոր պայմանագրի նախագիծը: Բանակցություններում Վրաստանի պատվիրակությունը գլխավորում է արտգործնախարար Իրակլի Մենաղարիշվիլին:

Աֆղանստանում 1000 թուրք խաղաղարարներ

Թուրքական «Սաբահ» թերթը գրում է, որ Աֆղանստան ուղարկվող միջազգային խաղաղարար ուժերի կազմում ներկայացված կլինեն Թուրքիայի 1000 «երկնագույն սաղավարտներ»:

Տես նաեւ էջ 5

Կարեն Բաբայանը ազատ է արձակվել

ԵՐԵՎԱՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ: ԼՂՀ Գերագույն դատարանի քրեական գործերով կոլեգիան այսօր, քննության առնելով Ստեփանակերտի նախկին քաղաքապետ Կարեն Բաբայանի փաստաբան Անահիտ Եսայանի բողոքը, փոփոխել է Ստեփանակերտի քաղաքային դատարանի այս տարվա նոյեմբերի 16-ի դատավճիռը: Կ. Բաբայանի նկատմամբ կիրառվել է 4 տարվա պայմանական դատապարտություն, եւ նա ազատ է արձակվել դատարանի դահլիճից: Հիշեցնենք, որ Կ. Բաբայանը մեղադրվում էր պաշտոնական դիրքի չարաշահման եւ աղօրինի զենք պահելու մեջ ու դատապարտվել էր 5,5 տարվա ազատազրկման: Մինչ քաղաքապետ լինելը նա զբաղեցրել է ԼՂՀ ՆԳ նախարարի պաշտոնը: Կ. Բաբայանը Սամվել Բաբայանի ազգակից եղբայրն է:

Հայաստանի եւ Ճապոնիայի արտգործնախարարների հանդիպում

ԵՐԵՎԱՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Դեկտեմբերի 20-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի՝ Ճապոնիա այցի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի հանդիպումը Ճապոնիայի արտգործնախարար Մ. Տանակայի հետ:

Ըստ ԱԳՆ հասարակայնության հետ կապերի վարչության, հանդիպման ընթացքում ստորագրվել է երկու հայտագիր՝ Ճապոնիայի կառավարության «Զարգացման պաշտոնական աջակցության» ծրագրի ներքո Հայաստանում բժշկական եւ մշակութային երկու դրամաշնորհային նախագծերի իրականացման վերաբերյալ: Հայտագրերի ստորագրման արարողությանը հետեւած զրույցի ընթացքում Վ. Օսկանյանը եւ Մ. Տանական քննարկել են երկու երկրների միջեւ քաղաքական երկխոսության հետագա ծավալմանը, երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը վերաբերող մի շարք հարցեր:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ տարածաշրջանային խնդիրներ, որոնց շարքում նախարար Օսկանյանը ներկայացրել է ԼՂ հիմնահարցի կարգավորման ներկա իրավիճակը:

Կողմերն ընդգծել են միջազգային կազմակերպություններում համագործակցության սերտացման կարեւորությունը: Այդ կապակցությամբ Վ. Օսկանյանը վերահաստատել է ՀՀ աջակցությունը Ճապոնիային՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ դառնալու հարցում:

ՈՒՇԱԳԻՐ

Ամբասանյալ Կարեն Հունանյանի ցուցմունքների հրապարակումը երեկվա դատական նիստի ընթացքում սկսվեց եւ ավարտվեց: Նրան անհամեմատ ավելի փոքր թվով հարցեր էին տրվել, քան Նաիրի Հունանյանին, հարցերի գերակշիռ մասին էլ ամբասանյալը չէր պատասխանել, այնպես որ դատավարության այս փուլն արագ ամփոփվեց: Նիստի առավոտյան հատվածը, սակայն, այնքան էլ հարթ չընթացավ, քանի որ ամբասանյալը հերթական անգամ բացարկ հայտնեց դատավորին, դժգոհեց, թե ոտնահարվում են իր իրավունքները, թե դատարանն անաչառ չէ եւ այլն: Սրան հավելած մեղադրյալների պաշտպաններն էլ վերսին բարձրացրին չվճարված աշխատավարձերի հարցը: Այս անգամ բողոքելու հերթը պաշտպանը՝ ամբասանյալն անընդհատ նշում էր, թե երբեւէ չի պնդել իր նախաքննական ցուցմունքներից եւ ոչ մեկը: Սակայն ոչ հերքում, ոչ հաստատում, ոչ էլ պարզաբանում էր իր ցուցմունքներում հայտնաբերված հակասությունները: Մի պահ այնպիսի տպավորություն էր, թե դատավորն ու մեղադրողը ուր որ է սկսելու են համոզել ու խնդրել ամբասանյալին, որ հարցերին պատասխանի: Սակայն նրանց «մանկավարժական» մեթոդներն ապարդյուն անցան: Միայն մեկ հարց էր, որ, ըստ երեւույթին, համբերությունից հանեց ամբասանյալին. նա չկարողացավ զսպել իրեն ու վերաբերմունք չարտահայտել: Իր նախաքննական ցուցմունքներում ամբասանյալը հայտնել է, թե Աժ դահլիճ մտնելուն պես ինքը սպանել է Վազգեն Սարգսյանին, եղբայրը՝ նախագահությունում նստածներին: Այս քայլն, ըստ նրա նախաքննական ցուցմունքի, ինքն ու եղբայրը կատարել են հիմնվելով Նաիրիի կողմից նախապես հաշվարկված ծրագրին: Այսինքն՝ պատահական քայլ նրանց գործողություններում չի եղել: Հիշենք, սակայն, Կարեն Հունանյանի՝ դատարանի դահլիճում հնչեցրած ցուցմունքները, որոնցում հակառակ բնութագրում է տրվում իրենց գործողություններին: Կարեն Հունանյանը մերթ ասում էր, թե՝ իրենք, դահլիճ մտնելով, նախ օդ են կրակել, մերթ ինքն ու եղբայրը հայտարարում են, թե Աժ դահլիճում ներկաներից որեւէ մեկին սպանելու մտադրություն չեն ունեցել, թե իրենց նպատակը պարզապես հեղաբջջում կատարելն էր, մերթ Նաիրի Հունանյանը պնդում է, թե սպանությունների պատճառը եղբոր անկառավարելի վարքն է եղել եւ այլն: Այս ամենը լսել ենք դատարանի դահլիճում, այնինչ բոլորովին հակառակն է ասվել նախաքննական մարմնին:

Կարեն Հունանյանն իր նախաքննական ցուցմունքներում հայտնել է, օրինակ, հետեւյալը. «Երբ Աժ դահլիճի նախասրահում էինք, Նաիրին ինձ ասաց, որ սպանեմ վարչապետին, ինքն էլ կսպանի Դեմիրճյանին ու Բախչյանին: Ես Վազգենի հանդեպ անձնական թշնամանք չեմ ունեցել: Այս գործողությունների ծրագիրը Նաիրին կազմել էր դեռեւս տարի

ԱԶԳ

ՈՄԲԱՑԻԿ

Պատկերացրեք, թե ինչ վայնասուն կբարձրացնեին Իսրայելի պետությունը, իրական լոբբին, եթե որեւէ հայ դիվանագետ, ասենք, Իսրայելում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության երկրորդ քարտուղարը Թել Ավիվի «Քինգ Դեյվիդ» հյուրանոցում ճեպազրույցի հրավիրեր հրեա լրագրողներին եւ հայտարարեր հետեւյալը. «Հայաստանը ճանաչում է հրեա ժողովրդի կրած տառապանքները, այնուամենայնիվ, կարծում ենք, հրեական ողջակիզման ֆենարեւոր, բայց ակադեմիական հարց», ասել է հրեա դիվանագետը:

Մոտավորապես նման մոտեցման վրա է հույսը դրել նաեւ Ադոլֆ Հիտլերը՝ հրեաների ցեղասպանության կազմակերպիչը, հայտարարելով, թե այսօր ո՞վ է հիշում հայերի կոտորածները:

Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել են միջազգային հեղինակավոր մի շարք կազմակերպություններ, 10-ից ավելի պետություններ, այդ թվում Ֆրանսիան՝ այս տարվա հունվարին: Քլեյմանի ցինիկ «ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ» է տեղի ունեցել հարցին ազնիվ պետությունները, քաղաքական գործիչները, պատմաբանները, որոնց թվում ֆիզ չեն ծագումով հրեա գիտնականները, պատասխանել են. «Տեղի է ունեցել մարդկության դեմ հանցագործություն՝ հայերի զանգվածային բնաջնջում, առաջին աշխարհամարտի տարիներին, Օսմանյան Թուրքիայի տարածքում»:

Պրն Քլեյմանը Ցեղասպանությունը ճանաչելու փոխարեն խորհուրդ է տալիս հայ-թուրքական հարաբերությունները կարգավորել եւ դրա լավ օրինակ է բերում «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը»: Իհարկե, մենք կարող ենք առաջարկել այսպիսի տարբերակ. ԱՄՆ պետդեպարտամենտը կազմակերպում է 4 հրեաների (երկուսը՝ Եհուդ Բարաքի նախկին կառավարության անդամներ, մեկ ռուսաստանցի եւ մեկ ամերիկացի հրեա) եւ 6 նեոֆաշիստների դոնփակ հանդիպումները Լեհաստանում, Ավստրիայում եւ Գերմանիայում, ապա հռչակում է «Գերմանա-հրեական հաշտեցման հանձնաժողովի» ստեղծման մասին եւ փորձում հստակություն մտցնել՝ եղե՞լ է հրեական ողջակիզում, թե՞ ոչ:

Չմոռանանք նշել, որ հրեական ողջակիզման հարցը գլխավորապես վերաբերում է պատմաբաններին, եւ այդ հարցի քաղաքականացումը վնասում է հրեա-գերմանական հարաբերություններին:

Հարի Քլեյմանն արել է եւս մի քանի սադրիչ հայտարարություններ: Հայաստանում Իսրայելի դեսպանատուն բացելու վերաբերյալ հրեա դիվանագետը նշել է, որ դա կախված է Հայաստանից, եւ եթե վաղը հայկական դեսպանատուն բացվի Թել Ավիվում, հաջորդ օրը հրեական դեսպանատուն կբացվի Երեւանում: Եթե վերոնշյալ սկզբունքով է գործում Իսրայելի պետությունը, ապա նշանակում է՝ Իսրայելը չպետք է դեսպանատուն

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Դիվանագիտական ցինիզմ

կումն այս փուլում պետք է սկսեն պատմաբանները եւ ճշտեն, թե հսկայական ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ է տեղի ունեցել: Կարծում եմ, այսօրվա դրությամբ դժվար թե երբեւէ օգտակար լինի այս հարցը խառնել քաղաքականությանը: Ավելի լավ է դա մնա որպես կարեւոր, բայց ակադեմիական հարց»:

Պաշտոնական Երեւանը, որ իր արտաքին քաղաքականության հիմքում դրել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, դեռեւս չի արձագանքել եւ դժվար թե արձագանքի Վրաստանում եւ Հայաստանում Իսրայելի դեսպանության երկրորդ քարտուղար Հարի Քլեյմանի օրերս «Երեւան» հյուրանոցում անցկացրած բրիֆինգում հայտնած սադրիչ հայտարարություններին: Մասնավորապես, Հայոց ցեղասպանության հարցի առնչությամբ հրեա դիվանագետն արել է հայտարարություն, որը տեղավորվում է դիվանագիտական ցինիզմի շրջանակներում: «Իսրայելը ճանաչում է հայ ժողովրդի կրած տառապանքները, այնուամենայնիվ, կարծում ենք, Հայոց ցեղասպանության հարցի քննարկման այս փուլում պետք է սկսեն պատմաբանները եւ ճշտեն, թե հսկայական ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ է տեղի ունեցել: Կարծում եմ, այսօրվա դրությամբ դժվար թե

ԿՅԱՆՔԸ ԻՄԱՍՏՈՒՄ Է

ԳՅՈՒՄՐԻ

Քննարկման թեման ձմռան խնդիրներն էին՝ հեռագայի համար

«Շիրակի մարզային կուսակցական համաձայնություն» միջկուսակցական դաշինքը պարբերաբար կազմակերպում է հասարակական լսումներ Գյումրու եւ մարզի սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների, դրանց լուծման հետ կապված հարցերի մասին: Երկուշաբթի օրը կազմակերպված հերթական հասարակական լսումը նվիրված էր մարզկենտրոնի ձմռան նախապատրաստական աշխատանքներին եւ կրում էր «Առաջարկություններ, ծրագրեր, անելիքներ» ենթախորագիրը, որն էլ հուշում էր ծավալվելիք խոսակցության ընթացքը: Ճիշտ է, հարցը բավականին ուշ էր քննարկվում, քանի որ ձմեռը վաղուց եկել է, սակայն ծավալված խոսակցությունն ու մի շարք հարցադրումներ կարող են օգտակար լինել հեռագայի համար: Առավել եւս, որ այս անգամ հրավերին արձագանքել եւ խոսակցությանը մասնակցում էին նաեւ տեղի իշխանության ներկայացուցիչներ՝ ի դեմս մարզպետարանի սոցիալական, առողջապահության վարչությունների ու քաղաքապետարանի կոմունալ բաժնի պետերի:

Բանախոսը՝ ՀԺԿ խորհրդի անդամ, նախաերկրաշարժյան Լենինականի նախկին քաղաքապետ Էմիլ Կիրակոսյանը, մասնավորապես տեղեկացրեց, թե այն տարիներին, երբ քաղաքն ուներ 230 հազար բնակչություն, 62 կաթսայատներ աղահովում էին քաղաքի բնակֆոնդի 86 տոկոսի ջեռուցումը: Այս թվի մեջ չեն մտնում դպրոցները, մանկապարտեզները, արդյունաբերական ձեռնարկությունները ջեռուցող կաթսայատները: Այսօր բացի «Անի» թաղամասից, որտեղ ապրում է մոտ 6,5 հազար ընտանիք կամ բոլոր ընտանիքների թվի 18 տոկոսը, քաղաքում չկա բնակֆոնդի ջեռուցում: Ճիշտ է, եւս 9 հազար բնակարան գազիֆիկացված է, որը նույնպես տաքացման հնարավորություն է տալիս, բայց էլի մեծ մասի հարցը մնում է չլուծված: Ընդունելով, որ ջեռուցման կազմակերպմանը լրջորեն խանգարող հանգամանք է մնում չվճարումների, վարձավճարների մեծ պարտքերի խնդիրը, որն իր հերթին պայմանավորված է սոցիալական ծանր իրավիճակով, զեկուցողն ու ելույթ ունեցողները նաեւ ընդգծեցին, որ Հայաստանում ամենացուրտ ու տաքական ձմեռն ունեցող Շիրակում ջեռուցման համար 3 ամիսը շատ քիչ է եւ հարկավոր է ջեռուցել ամենաքիչը գոնե 4 ամիս: Տեղեկացվեց, որ ռուսական ռազմակայանի 8-րդ բնակելի թաղամասում 6 ամիս է եւ ընդգրկում է հոկտեմբերի 15-ից մինչեւ ապրիլի 15-ն ընկած ժամանակամիջոցը: Խորհրդային տարիներին այդպես էր ամբողջ քաղաքում:

Հասարակական լսման ընթացքում արված առավել ընդունելի առաջարկություններն ու դիտողությունները կօգտագործվեն «Համաձայնության» ստեղծելիք համապատասխան ծրագրերում ու առաջարկություններում, որոնք կտրամադրվեն նաեւ իշխանություններին:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՐԵՒԱՆԵԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Նորոտեայ գորգագործութիւն

Գորգագործութեան արուեստը հայկական արմատներ ունի: Այս կը փաստեն միջազգային շատ մը հեղինակաւոր գորգագէտներու ուսումնասիրութիւնները:

Դարեր շարունակ, որդոց-որդի, ձեռք-ձեռք փոխանցուած է ան ու ժամանակի ընթացքին նոր որակ ու ձեւ ընդունած է, նոր նախշ ու երանգ:

Իւրաքանչիւր շրջան, տեղական եւ ժամանակային առումով, իր ուրոյն կնիքով դրոշմած է իր իւրայատուկ ոճն ու հայեացքը, ինչու չէ, նաեւ իր փիլիսոփայութիւնը, հաւատալիքներն ու մշակոյթը ցոլացուցած է անոր ընդմէջէն:

Հայկական գորգերը ոչ միայն կը զարդարեն մեր թանգարանները, այլեւ աշխարհի շատ մը թանգարաններ:

Եվ ահա, այս արուեստը այսօր եկեր հասեր է մեզի, նորոտեայ Երեւան, ուր խանմէկերորդ դարու հայը, տասնամեայ անկախութեան հենքին վրայ, այս անգամ իր ոճով սկսած է գործել զայն:

Գորգագործութեան դասական գործելաձեւին, գործելաոճին ու բարձրորակ արտադրութեան կողքին ու անոր զուգահեռ, մայրաքաղաքի զանազան այգիներուն, զբօսանքի վայրերուն, սրահներուն ու մարզադաշտերուն մէջ, մեր «արուեստագէտ» պարման-պարմանուհիները չտեսնուած գորգեր կը գործեն «հենց» իրենց նստած տեղերը ու նստարաններուն շուրջ, սակայն, ոչ թէ բուրդով ու բրդաթելով, այլ՝ կռահեցէք ինչո՞վ... **սեմուշքայո՛վ**... այո՛, արեւածաղիկի սերմերու կճեպներով ու տեսնէք ի՞նչ ջանասիրութեամբ, ի՞նչ ոգեւորութեամբ, ի՞նչ անտարբերութեամբ:

Ափսոս որ նկատի առնող չկայ, որ այս աննախընթաց արուեստը մտնէ Գինէսի չափանիշներու գիրքին մէջ, կամ այլ տեղ գտնէ թանգարաններուն մէջ:



Այս երկնուած արուեստի գործերուն միակ գնահատական տուողը այգիի հավաքարարն է, որուն աւելի հարուածներուն զոհ կ'երթան անոնք:

Սակայն, ոչինչ, յուսահատիլ չեն գիտեր մեր այս նորոտեայ գորգագործները: Վաղը, դարձեալ կուգան, տղայ ու աղջիկ, կը նստին իրար փաթթուած ու սիրոյ խօսքերուն հետ բերաններէն դուրս կը թողեն **սեմուշքայի** կճեպները անհետացածներուն փոխարէն, նորերը արարելու...

ՏԻՄԵՆ

ԳՈՐԻՍ

«Ողջ քաղաքի առողջությունը վերջնականապես չվտանգելու համար...»

Որ խմելու ջրի, ներքին ցանցի հարցերը Գորիսում ամենացավալին ու շահարկվածն են, այդպես է, որ մայիս-հունիս ամիսների համեմատ նկատելի է գրաֆիկով ջրամատակարարման բարելավում, այդ էլ այդպես է: Իրողություն է եւ այն, որ որքան էլ թվերը լրատվամիջոցներին տրամադրվեն կամ ոչ, Գորիսում աղետամոտային տրակտի խանգարումները, հիվանդությունները միշտ էլ իրենց «ծանրակշիռ» տեղն ունեն: Վերջին ամսում էլ «շնորհ արեց» դեղնախտը՝ 20 դեպք: Չնայած ընդունված է ասել, որ դեղնախտը «կեղտոտ ձեռքերի» հիվանդություն է, բայց ինչպես ավելի պարզ դարձավ օրերս Գորիսի քաղաքապետարանում կայացած արտահերթ խորհրդակցությունից, խթանող հանգամանքներ էլ կան: խողովակների մաքվածությամբ ու որոշ քաղաքացիների «ինքնագործունեությամբ» պայմանավորված խափանումներ, խմելու ջրի եւ կոյուղու խողովակաշարերի «համագործակցության» վերահաս վտանգ, ջրի վարակազերծման օբյեկտիվ եւ սուբյեկտիվ դժվարություններ՝ կապված ջրաքանակների եւ հեղուկ քլորի պակասի հետ, մասսայական սանիտարական աշխատանքների ոչ մեծ ընդգրկում...

Քննարկում-ելույթներում ընդգծվեց, որ խմելու ջրի կարգավորման օրախնդիրը միայն քաղաք մտնող ջրաքանակներով, գրաֆիկով ջրամատակարարմամբ չի պայմանավորված. խողովակաշարերի մաքվածությանը զուգահեռ, գուցե ավելին, զգացնել են տալիս միջոցների բացակայությունը, վարձավճարների հավաքման... աֆիլեսյան գարշադարը:

Սահազանգի պես հնչեց «Գորիս-ջուր» մասնաճյուղի տնօրեն Յու. Պետրոսյանի խոսքը. «Ես ընդունում եմ բոլոր մեղադրանքները, որովհետեւ անկախ այն բանից, թե ինչու դրանք կան կամ ինչ է արված կան: Բայց եկեք մեղավորներ չփնտրենք, պարզապես մեկընդմիշտ գտնենք դրանց լուծման միջոցները եւ ճանապարհները»: Քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի փաստարկն էլ ահազանգ էր. «Այսօր իմ աշխատասենյակ մտավ մի քաղաքացի եւ ասաց, որ իր երեխան հիվանդացել է դեղնախտով, որ եթե նրան մի բան պատահի՝ դատի կտա: Ես հասկանում եմ նրան»: Փոխմարզպետ Զավեն Գրիգորյանը սեւեռեց այն միտքը, որ «եթե մասնաճյուղի գլխադասը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն է, ուրեմն նա էլ՝ մարզային եւ համայնքային իշխանությունների սպասումի պարագայում, պարտավոր է նորմալ տեխնիկական մակակարարում իրականացնել: Գլխադասի ներկայացուցիչն էլ հավաստեց, որ մեկ շաբաթվա ընթացքում համատեղ կկազմեն միջոցառումների ծրագիր՝ առաջնայնությամբ խափանումների, վթարների օպերատիվ վերացման, վարակազերծման խնդիրների լուծման, հաշվանցումների՝ պարտքերի դիմաց տարանցիկ հաշվին փոխանցելու մեխանիզմների հնարավորինս ճշտման: Թիվ 3 դպրոցի տնօրեն Յու. Ալեքսանյանը նկատեց, որ «վարձավճարների հավաքումը չի լուծվի՝ մինչեւ ջրաչափեր չտեղադրվեն, ինչպես ողջ քաղաքակիրթ աշխարհում է արվում»: Հետաքրքրական է վաստակավոր էներգետիկ Լյովա Առուստամյանի դիտարկումը. «Եթե սպասենք ջրաչափերին, եղած խողովակներն էլ կքրքվեն: Ողջ քաղաքի առողջությունը վերջնականապես չվտանգելու համար անհրաժեշտ է առաջինը սկսել ներքին ցանցի այն հատվածներից, որտեղ փականները հաղորդակից են կոյուղուն, անհրաժեշտ է տեսություններից արագ գործի անցնել: Բոլորս նորմալ, անխափան ջրամատակարարում ենք ուզում, բայց ինչպե՞ս. վարձավճարների հավաքմանը պիտի բոլորս նպաստենք»: Գուցե, ինչպես Յու. Պետրոսյանն ասաց, այլեւս մեղավորներ չփնտրենք:

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գորիս

«Բարով մաշեա»

Մաշվել են ձեր կոշիկները եւ բնականաբար կարիք ունեք նորի, որն էլ պետք է համապատասխանի ձեր գրպանի կարողությանը: Իսկ այդպիսին կարելի է ձեռք բերել միայն այսպես կոչված «տոնավաճառներից» մեկում: Ասենք, Մալաթիայինը, որտեղ թվում է, թե առաջարկը համապատասխանում է պահանջարկին: Երկաթգծի փնտրտուքից հետո գտնում ես այն, ինչ ուզում ես: Գինը համապատասխանում է ձեր գրպանին, տեսք՝ ճաշակին: Բայց որակը տարակուսանք է առաջացնում: Համարձակվում ես կասկածի տակ դնել դրանց որակը եւ հենց այդ պահին պարզվում է, որ ձեզ առաջարկվող կոշիկները ոչ միայն լավագույնն են երեւանում, այլեւ ողջ մոլորակի վրա դժվար է գտնել ավելի որակյալը եւ էժանը: Հոետորական տաղանդը սպառելուց հետո վաճառողն անցնում է ածպարարի իր հմտությունները ցուցադրելուն՝ տարբեր ձեւերով ծռմռելով կոշիկը՝ աղացուցելու համար, որ տակդիրները եղածների մեջ ամենաամուրն են:

Վերջապես «հավաստալով» գովազդին, գնում ես եւ գոհ վերադառնում տուն: Բարեկամները եւ ընկերները միաբերան ձեզ շնորհավորում են «բարով մաշեա» բացականչություններով: Շատ շուտով այս մաղթանքը վերածվում է անեծքի: Երկու օր չանցած ձեր կոշիկների տակդիրները պոկվում են: Հասկանալ ես, որ ձեզ հիմարի տեղ են դրել եւ ջանք չես խնայում հետ բերելու կորսված գումարը: Նորից այցելում ես տոնավաճառ, բայց պարզվում է, որ նախկին վաճառողի տեղում կանգնած է նրա մայրը: Վերջինս անմեղ հայացքով նայում է ձեր դեմքին եւ բացականչում. «Բալա ջան, ինչ անեմ, արտասահմանից բերած ապրանք է, ես հո մեղավոր չեմ»: Ինչը նշանակում է, որ ձեր գումարի վերադարձն առանց որեւէ մեկի միջամտության դվում է խիստ կասկածի տակ:

Ինչպես ամեն մի խնդրի լուծում, այս մեկն էլ ունի երկու տարբերակ՝ ա) կարելի է բողոք ներկայացնել տոնավաճառի ադմինիստրացիային, բ) գտնել նույն տեղում ծանոթ որեւէ «հեղինակության»: Բ տարբերակը գերադասելի է, որովհետեւ նման դեպքում միշտ ընդունված է դիմել ծանոթներին, եւ հնարավոր է գումարի վերադարձը առանց ավելորդ աղմուկի:

Կարծում եմ, որ նման իրավիճակներից խուսափելու համար ճիշտ կլիներ տոնավաճառներում ստեղծել հատուկ ծառայություն, որն էլ կգբաղվեր վաճառվող ապրանքի որակի ստուգմամբ: Հուսով ենք, որ այս հարցին ուշադրություն կդարձնեն Հայաստանում սպառողի շահերի պաշտպան կազմակերպությունները, իսկ մեր գնորդներին կցանկանանք աչալրջություն եւ «բարի գնումներ» տոնավաճառներում:

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Շիրակի հայագիտական երրորդ ժողովածուն

Մայրաքաղաքից դուրս գիտական մտքի կազմակերպման կայուն գործոն է դառնում ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուն: Ազգային ակադեմիայի «Գիտություն» հրատարակչությունում տպագրվող պարբերականի հերթական՝ երրորդ համարը, ինչպես նախորդները, հարուստ նյութ է պարունակում՝ ներառելով հայագիտության եւ հատկապես շիրակագիտության տարբեր ոլորտներ:

Ժողովածուի առաջին բաժնում տպագրված երկու տասնյակից ավելի գիտական հոդվածները վերաբերում են Հայաստանի, նրա հյուսիս-արեւմուտքի վաղ շրջանների աշխատանքային գործիքներին, կենցաղին ու հավատալիքներին, ամեմենյան եւ հելլենիստական ժամանակաշրջանների կառուցողական եւ ճարտարապետական արվեստի հուշարձանների առանձնահատկություններին, պատմության, ազգագրության, լեզվական, հոգեբանական, մշակութային այլեւայլ իրողություններին ու խնդիրներին: Արդիական հնչեղություն ունեցող կարեւոր պատմական թեմայի է անդրադառնում Գայանե Քոչարյանը «Արտաշես Ա Բարին որպես հզոր պետականության կերտող» հոդվածում: Այստեղ պատմական աղբյուրների տեղեկությունների գիտական վերլուծությամբ Արտաշես Առաջինի «բոլոր առաքինական գործերից եւ բարեկարգություններից» հառնում է, հեղինակի բնորոշմամբ, հայ իրականության մեջ խոր հետք թողած անհատականություն՝ երկիրյուրայա արքայատոհմ հիմնած, Հայաստանի քաղաքական անկախությունն ու տարածային ամբողջականությունը վերականգնած ողջամիտ քաղաքագետի, խոհեմ բարենորոգչի, հմուտ տնտեսագետի, ճարտար քաղաքաշինարարի, լայնախոհ պետական գործչի կերպարը, որի գործունեությամբ կերտվեց հզոր պետական կառույց, զարգացան համազգային մշակույթն ու գիտությունը, տնտեսությունն ու հաղորդակցության ուղիները, ստեղծվեցին անհրաժեշտ նախադայմաններ Տիգրան Բ Մեծի միջազգային ասպարեզում ունենալիք նշանակալի դերի համար: Մեծ Հայքի Գուգարք նահանգի ուրբերորդ գավառը եղած երկրամասի հնագույն ժամանակներից մինչեւ 18-րդ դարավերջի պատմության սեղմ ուրվագիծ է Աշոտ Մելքոնյանի «Ջավախքի պատմական անցյալից» հոդվածը: ՀՀ արդի տեղանվանաբանության սկզբունքային խնդիրներ են արծարծվում Դերենիկ Ս. Վարդումյանի համանուն հոդվածում, որտեղ ի մասնավորի հերթական անգամ առաջ է քաշվում հանրապետության երկրորդ քաղաքի անվան ներկայիս թրքաշունչ «Գյումրի» տարբերակից հրաժարվելու եւ քաղաքին իր պատմական ու հայեցի «Կումայրի» անունը վերադարձնելու հարցը: Շիրակի մարզկենտրոնի աշխատանքային ռեսուրսների եւ բնակչության զբաղվածության վերլուծության փորձ է Համլետ Սարգսյանի եւ Արտաշես Բոյաջյանի համատեղ հետազոտությունը:

«Հրապարակումներ եւ հաղորդումներ» բաժնում առավել ուշագրավներից մեկն Արթուր Նիկողոսյանի անդրադարձն է Ալեքսանդրապոլի «ճշմարտություն որոնողների ընկերության» գործունեությանը, 20-րդ դարասկզբի պատմական մի դրվագում հայ ազատագրական շարժմանը նրա անդամների մատուցած անգնահատելի ծառայությանը: Արմեն Տիգրանյանի «Քյոռօղլի» անավարտ օպերայի երաժշտական եւ նյութի բանահյուսական արժեքի մասին է Հասմիկ Ստեփանյանի հրապարակումը:

Ժողովածուն ամբողջանում է երրորդ համարում ավելացած գիտական լրատուով եւ տպագրված բոլոր նյութերի բովանդակությունների անգլերեն հակիրճ ամփոփումով:

Գ. Ս.

ԱԶԳ Միջազգային

ԻՐԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼ

«Մոսկվա-Վաշինգտոն ջերմ հարաբերությունները խոսքից այն կողմ չեն անցնի»

Ըստ իրանական թերթի՝ «Ադրբեջանը գործում է ԱՄՆ-ի թելադրանքով»

Պաշտոնական տեսակետներ արտահայտող «Իրանի ձայն» ռադիոկայանը դեկտեմբերի 16-ին լայնորեն անդրադարձել է ԱՄՆ պաշտպանության քարտուղար Դոնալդ Ռամսֆելդի տարածաշրջանային այցին: «Ահաբեկչության դեմ պատերազմի անվան տակ ամերիկացիներին հաջողվեց ռազմական ներկայություն հաստատել Ուզբեկստանում: Վաշինգտոնը նպատակ ունի վերացնել Ադրբեջանի եւ Հայաստանի հանդեպ կիրառվող արգելքները եւ հող նախապատրաստել այդ երկու պետությունների հետ ընդլայնելու ռազմական համագործակցությունը», հաղորդում է «Իրանի ձայնը»: Ռադիոկայանը առավել ուշադրություն է դարձնում պրն Ռամսֆելդի՝ Վրաստանի հասցեին արած հայտարարություններին: ԱՄՆ պաշտպանության քարտուղարը ակնարկել էր, թե չէին լինի ռուսական օդուժի վրացական տարածքների ռմբահարումները, եթե Վաշինգտոն-Թբիլիսի կապերը պատված մակարդակի լինեին: «Մենք լիովին պաշտպանում ենք Վրաստանի տարածքային ամբողջականությունը եւ ինքնիշխանությունը: Մենք զգում ենք, որ վրաց-ամերիկյան ռազմական սերտ համագործակցությունն արդարացված է եւ օգտակար նման խնդիրներ առաջանալու համատեքստում», ասել էր Ռամսֆելդը: Այս հայտարարությունն իրանական ռադիոն մեկնաբանել է որպես ԱՊՀ անդամ պետությունների հարաբերություններին խոչընդոտելու ԱՄՆ-ի փորձ: «ԱՄՆ-ը բոլորովին էլ Ռուսաստանին չի վերաբերվում որպես ռազմավարական գործընկերոջ: Հակահրթիռային պաշտպանության համակարգից ԱՄՆ-ի միակողմանիորեն դուրս գալը ցույց է տալիս, որ միջազգային հարցերում Վաշինգտոնը որեւէ կարեւորություն չի տալիս Մոսկվայի դիրքորոշումներին: Մոսկվա-Վաշինգտոն ջերմ հարաբերությունները խոսքից այն կողմ չեն անցնի», եզրակացնում է Իրանի ռադիոն:

Իրանական մամուլն այս օրերին հաճախակի է անդրադառնում Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեկտեմբերի 25-27-ը Թեհրան կատարելիք պաշտոնական այցին: Պաշտոնական տեսակետներ արտահայտող «Իրան նյուս» օրաթերթը դեկտեմբերի 19-ի խմբագրականում Հայաստանի նախագահի այցը որակում է «իդեալական հնարավորություն Իրան-Հայաստան բարձր մակարդակի համագործակցությունը» խորացնելու առումով: Խմբագրականում շեշտվում է ԼՂ հարցում Իրանի «չեզոք եւ անաչառ» դիրքորոշումը: Թերթը նշում է, որ ի տարբերություն Հայաստանի, Ադրբեջանը չկարողացավ ճիշտ արձագանքել Թեհրանի առաջարկություններին եւ այսօր «Ադրբեջանը գործում է ԱՄՆ-ի թելադրանքով»: «Իրան նյուսը» Ադրբեջանի նախագահ Հ. Ալիեւի տարիներ ձգձգվող այցելությունը Իրան պայմանավորում է Բաքվի ամերիկամետ քաղաքականությամբ:

«Ե՛վ Իրանը, եւ Հայաստանը Ռուսաստանի հետ պահպանում են ամուր կապեր, եւ այս եռակողմ ռազմավարական դաշինքը կարող է իդեալականորեն ծառայել բոլոր երեք պետությունների շահերին», եզրափակում է «Իրան նյուսը»:

Թ. Հ.

Աֆղանստանում կտեղաբաշխվեն 3000 խաղաղարարներ



Վարչապետ Համիդ Կարզայ

Աֆղանստանի ժամանակավոր անցումային կառավարությունն ի վերջո համաձայնել է, որ երկրում տեղաբաշխվեն միջազգային խաղաղարար ուժեր, որոնց թվակազմը կհասնի 3000-ի: Ավելի վաղ աֆղան ղեկավարները կողմ էին արտահայտվել ՄԱԿ-ի ընդամենը 1000 զինծառայողների տեղաբաշխմանը: Խաղաղարար ուժերն առաջիկա շաբաթ օրվանից ներկա կլինեն Քաբուլում եւ շրջակայքում: Նրանք Աֆղանստանում կմնան 6 ամիս, որպեսզի ապահովեն դեկտեմբերի 22-ից Քաբուլում աշխատանքն սկսող ժամանակավոր անցումային կառավարության անվտանգությունը եւ երկրի կայունությունը:

Վարչապետ Համիդ Կարզայը [illegible]ին հիշեցրեց Աֆղանստանի բազմամյա անտեսման տխուր հետեւանքները եւ հույս հայտնեց, որ առաջիկայում դա չի կրկնվի: Կարզայը լրագրողներին հայտարարեց, որ միջազգային խաղաղարար ուժերը, որոնց մեջ գլխավորապես բրիտանացի, ֆրանսիացի, գերմանացի, իտալացի զինծառայողներ են, տեղաբաշխվելու են Բագրամի ռազմակայանում՝ Քաբուլից մոտ 50 կմ հյուսիս: Նա ընդգծեց, որ միջազգային ուժերի կազմում կան բազմաթիվ բժիշկներ, ճարտարագետներ եւ այլ մասնագետներ, որոնք օգնելու են Աֆղանստանի տնտեսության վերակառուցմանը եւ բուժհամակարգի աշխատանքին:

Կարզայը միաժամանակ ցանկություն հայտնեց, որ միջազգային ուժերը հեռանան Աֆղանստանից, «հենց որ աֆղանները կարողանան ապահովել իրենց սահմանների, երկրի եւ ընտրված կառավարության պաշտպանությունը»: Նա ընդգծեց, որ «հարկավոր է ոչնչացնել ժողովրդին մեծ տառապանքներ պատճառած թալիբներին»:

Ճիշտ է, խաղաղապահների կազմում չկան ամերիկացիներ, բայց ամերիկյան զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ Ռիչարդ Մայերսը չորեքշաբթի օրը Բրյուսելում ՆԱՏՕ-ի երկրներից պահանջեց, որ միջազգային ուժերի եւ ամերիկյան զորքերի գործողությունները «համակարգվեն»: ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի հայտարարության համաձայն, Պակիստանի բանակը բավական արդյունավետ է գործում եւ վերջին օրերին ծերբակալել է այդ երկիր փախած «Ալ Ղաիդայի» հարյուրավոր մարտիկների: Միեւնույն ժամանակ «Ֆիգարո» թերթը նշում է, որ բազմաթիվ թալիբներ աղասան են գտել Պակիստանի սահմանամերձ փուշտունաբնակ շրջաններում, որոնք փաստորեն դուրս են կենտրոնական իշխանությունների վերահսկողությունից:

Ինչ վերաբերում է Ուսամա բեն Լադենին, նրա թաքնվելու հավանական վայրերի թվում, Պակիստանից եւ Սաուդյան Արաբիայից բացի, նշվում է նաեւ Սոմալին: ՆԱՏՕ-ի գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը պնդում է, թե ամերիկացիները պատրաստվում են հարձակվել Սոմալիի վրա: Բայց ԱՄՆ պետդեպարտամենտի խոսնակ Ռիչարդ Բաուչերը հերքում է նմանօրինակ պնդումները:

Պ. Բ.

Ռուսաստանը խաղաղարար ուժեր չի ուղարկի Աֆղանստան

ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովը Բրյուսելից ժամանելով Լոնդոն հայտարարել է, որ թեեւ «Ռուսաստանն աջակցում է Աֆղանստան միջազգային խաղաղարար ուժեր ուղարկելու նախաձեռնությանը, ինքը զինվորներ չի ուղարկի այդ երկիր»: Ըստ ՌԻԱ «Նովոստի» գործակալության, Իվանովը ողջունել է Աֆղանստանում միջազգային խաղաղարար ուժերի կազմում Մեծ Բրիտանիայի առաջատար դերը: ՌԴ պաշտպանության նախարարը կասկածում է, թե խաղաղարարները կզբաղվեն «կեղտոտ աշխատանքով»՝ Աֆղանստանում ահաբեկչական խմբավորումների ոչնչացման գործով, քանի որ «այդ գործով արդեն զբաղվում են ԱՄՆ հատուկ ստորաբաժանումները եւ Աֆղանստանի օրինական կառավարությունը»:

Մեծ Բրիտանիան պատրաստակամություն է հայտնել տրամադրել 1.500 «կատոյտ սաղավարտ»:

ՀԱՍԱՐՈՍ

2002 թ. ԱՄՆ ռազմական օգնությունը Իսրայելին՝ 3 մլրդ դոլար, Եգիպտոսին՝ 2 մլրդ, Հայաստանին՝ 4 մլն

«Ռոյթեր» գործակալությունը հաղորդում է, որ չորեքշաբթի օրն ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը 357 կողմ, 66 դեմ ձայներով հավանության է արժանացրել 2002 թ. ֆինանսական տարվա ԱՄՆ-ի՝ այլ պետություններին տրվող օգնության օրինագիծը, որը 15,3 մլրդ դոլար է: Մասնավորապես, Իսրայելին տրվելու է 3 մլրդ դոլար որպես ռազմական օգնություն, նույն նպատակներով Եգիպտոսին՝ 2 մլրդ, իսկ Կոլումբիային՝ 625 մլն՝ նարկոմաֆիայի դեմ պայքարի նպատակով: Ըստ «Ռոյթերի», 2002 թ. ԱՄՆ-ը ռազմական օգնություն կտրամադրի նաեւ Հայաստանին՝ 4 մլն դոլար:

Աբխազական երկաթգծի աղաշրջափակում՝ փախստականների վերադարձի դիմաց

Վրաստանի իշխանությունները համաձայն կլինեն աղաշրջափակել Աբխազիայի երկաթգիծը միայն այն դեպքում, եթե հնարավորություն տրվի Աբխազիայից շուրջ 300 հազար փախստականներին եւ բռնի տեղահանվածներին վերադառնալու մշտական բնակավայրեր: Այս մասին լրագրողներին հայտնել է հատուկ հանձնարարություններով դեսպան Մալխազ Կակաբիձեն, հաղորդում է «Սակինֆորմ» գործակալությունը: Պրն Կակաբիձեն շեշտել է, որ Ռուսաստանի եւ Հայաստանի դիրքորոշումը, որոնք ձգտում են հասնել աբխազական երկաթգծի աղաշրջափակմանը, կարելի է միայն ողջունել: «Մինչդեռ առանց Թբիլիսիի համաձայնության, երկաթգծի աղաշրջափակման մասին խոսք չի կարող լինել», ասել է Կակաբիձեն:

Վրացական մեկ այլ՝ «Փրայմ նյուս» գործակալությունը նշում է, որ Պուտին-Քոչարյան մոսկովյան հանդիպման ընթացքում քննարկվել է Աբխազիայի երկաթգծի վերաբացման հնարավորությունը:

Սեռական հիվանդությունների աննախադեպ աճ Վրաստանում

Վրաստանի վեներոլոգների ասոցիացիան մտադիր է հանդես գալ երկրում մարմնավաճառության մասին օրենք ընդունելու խորհրդարանական նախաձեռնությամբ: Դա պայմանավորված է վերջին մեկ տարում վեներական հիվանդությունների կտրուկ աճը դանդաղեցնելու նպատակով: Վրաստանի մակային եւ վեներական ինստիտուտի տվյալներով՝ 2001 թ. պաշտոնապես արձանագրվել է սեռական հիվանդությունների երկու հազարից ավելի դեպք, որից 754-ը՝ սիֆիլիսի:

Վրաց բժիշկների կարծիքով մարմնավաճառության օրենքի ընդունումը կուժեղացնի վեներական հիվանդությունների տարածման վերահսկողությունը:

Միաժամանակ երեք կախաղան Թեհրանի բանտում

Իրանի պաշտոնական ԻՌՆԱ գործակալությունը հաղորդում է, որ Թեհրանի «Դաստ» բանտում սպանություն գործելու համար կախաղան են բարձրացվել երեք հանցագործներ: Չորրորդ մարդասպանը խույս է տվել կախաղանից, քանի որ սպանվածի հարազատները կախաղան չեն պահանջել:

Իրանի օրենքներով մարդասպանների համար նախատեսված է մահվան դատավճիռ, բացառությամբ այն դեպքերի, երբ սպանվողի հարազատները դա չեն պահանջում:

Արտակարգ դրություն Արգենտինայում

Հուզումները շարունակվում են, կառավարությունը մասամբ արշավված է

Վերջին օրերին Արգենտինայի տնտեսական ճգնաժամը դրսեւորվում է ծայրահեղ ձեւերով, քանի որ սովյալների հուզումներ ու խռովություններ են սկսվել մի շարք նահանգներում եւ հենց մայրաքաղաք Բուենոս Այրեսում: «Լիբերասիոն» թերթը տեղեկացնում է, որ հուզումները սկսվել են անցյալ չորեքշաբթի Կոնկորդիա քաղաքում (հնգոտ Ռիոսի նահանգ), որի 150 հազար բնակիչներից 50 հազարը գործազուրկ են կամ զբաղված են մասնակիորեն: Այդ օրը հարյուրավոր սովյալներ փշրեցին հանրախանութներից մեկի ապակիները եւ մի քանի ոստիում սրբեցին-տարան խանութի պարունակությունը: Հաջորդ օրերին հուզումները շարունակվեցին Գուայմալենում (Մենդոսայի նահանգ), Ռոզարիոյում, ապա Բուենոս Այրեսի նահանգում: Երրորդ օրն անընդմեջ անհանգիստ վիճակ է մայրաքաղաք Բուենոս Այրեսում: Որոշ խանութպաններ փակել են խանութները, բարիկադներ սարքել:

Հետագա խռովությունները կանխելու նպատակով նահանգային իշխանությունները եւ նախագահ Ֆեռնանդո դե լա Ռուան կարգադրել են մբերքներ բաշխել սովյալներին: Բայց խանութպաններից քչերն են կատարում կարգադրությունը: Վերջին օրերին խանութներ են թալանվել Կոնսեպսիոն դել Ուրուգվայում եւ Սյուդադելոյում, ոստիկանների եւ ծառայողների բախումներ են տեղի ունեցել Կորդոբայում:

Նախագահ Ֆեռնանդո դե լա Ռուան երկրում մեկ ամսով արտակարգ դրություն է հայտարարել: Ռոյթեր գործակալության տվյալներով, բախումների հետեւանքով զոհվել է առնվազն 16 մարդ: Կառավարությունը հրաժարական է տվել, բայց նախագահն ընդունել է նախարարներից մի քանիսի, այդ թվում տնտեսության նախարար Դոմինգո Կավալոյի հրաժարականը: Վերջինս մեղքի մեծ բաժին ունի երկրի ներկա վիճակի համար: Արդեն տարեսկզբին գործազուրկները սկսել էին շրջափակել ավտոմայրուղիները, որպեսզի ուշադրություն հրավիրեն իրենց ծայրահեղ վիճակի վրա: Սակայն Կավալոն շարունակում էր տնտեսական դաժան քաղաքականությունը:

Այսօր Արգենտինայում գործազուրկ է աշխատունակ բնակչության 18,3 տոկոսը, աղքատների թիվը 14 միլիոն է (ընդ որում գործազուրկներինը՝ 5 մլն), երկրի արտաքին պարտքը կազմում է 132 մլրդ դոլար: Պետոն շաղկապված է դոլարին, ինչն արգենտինական ապրանքների արտահանության կրճատման պատճառ է դարձել: Վաճառքի ծավալներն այս տարի նվազել են 30-60 տոկոսով: Ժողովրդի համբերության բաժակը լցրեց շարունակվող սղաճի պայմաններում բանկային ավանդների վրա վերահսկողություն սահմանելու կառավարության որոշումը: Երկրի բազմաթիվ ընկերություններ վերջին օրերին իրենց սնանկ հայտարարեցին: Եվ այսօրից հետո կառավարությունը ծրագրում է եկող տարի 20 տոկոսով կրճատել ծախսերը եւ նոր խստություններ բանեցնել:

Ի տարբերություն 1989 թ. տեղի ունեցած նախորդ զանգվածային հուզումների եւ խռովությունների, որոնք գերդաստանի պայմաններում հանգեցրին նախագահ Ռաուլ Ալֆոնսինի հրաժարականին եւ հրահրված էին հաջորդ նախագահ Կառլոս Մենեմի ազգայնական պերոնիստական շարժման կողմից, այս անգամ երկրի գաղտնի ծառայությունները եւ ոստիկանները ընդգծում են հուզումների տարեային բնույթը: 1989-1999 թթ. Մենեմի վարած գերազատական քաղաքականությունը հանգեցրեց ներկայիս տնտեսական խոր ճգնաժամին, որը կարճ ժամանակամիջոցում չի հաղթահարվի: Ուստի հիմքեր կան ենթադրելու, որ երկրում հուզումները շարունակվելու են:

ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

«Խոսքից անդին է բուն իմաստը»

Կարպիս Սուրենյան «Պսակ թարգմանական»

«Ցա (Սանտակումարա իմաստունը) ուսուցանում է Նարադային, որ գիտե բոլոր մանտրաները, բայց տխուր է եւ ուզում է իմանալ Ասմանի մասին, որով կարող է հաղթահարել տխրությունը: Ո՞վ է առասպելական Սանտակումարան, եթե ոչ ներհուն հավերժական իմաստնության խտացում, որ տխրության հաղթահարող անդրանցական ուղի է ցույց տալիս Նարադային: Ասված է. «Նրան, ով սրբեց բծերն իր վրայից, պատկառելի Սանտակումարան ցույց է տալիս մյուս ափը խավարի: Սկանդա են կոչում նրան, այսինքն՝ այն կողմն անցնող, ճանապարհ ցույց տվող»:

Հասցնո՞ւմ ենք ապրել մեր ժամանակն արդյոք, որի գերագույն իմաստավորումն ինքնաճանաչման երկարատեւ ճանապարհը հաղթահարելն է, թե՞ անկասար տողանցումներ կատարելով՝ հեւոտ ճամփորդի նման դժվարանցելի ճանապարհներին միշտ հանգրվաններ ենք փնտրում՝ շարունակելու մեր ընթացքը հետագա: Եվ եթե Սանտակումարայի իմաստնությանն անսալ փորձենք՝ բծերը մեր վրայից մաքրելու (երբեմն սիզիֆյան աշխատանքի նմանվող), թերեւս սկսենք իրապես ապրել...

Այստեղից սկսեցի՝ հոգեհարազատության «գայթակղությունից» թերեւս: Կարպիս Սուրենյանի «Պսակ թարգմանական» նորընծա ժողովածուն բացվում է Հին Արեւելքի կրոնափիլիսոփայական՝ համաշխարհային նախասկզբնական գոյի իմաստը ընող հնդկական Չհանդոգյա ուպանիշադով (մ.թ. VIII-VII դդ.) եւ կեցության՝ մարդուն այնքան խրթին թվացող հարցերը պարզորեն մեկնող չին մտածող Չժուան Ցեի (369-286) «ծեր ծկնորսը» պատմությամբ, որտեղ ներդաշնության հասնելու եւ հոգեւոր բավարարվածության ճանապարհն առաջին հայացքից պարզ թվացող բանաձեւման մեջ է ամփոփված. «Ամենավաս բանը, որ կարող է վիճակվել մեզ, ուրիշների հանդեպ բարյացակամության պակասն է»:

Աշխարհի ներքին ընկալումների սուր զգացողությունների պահերին (երբ տրվում են այդպիսիք) մերձենում ենք մեր գոյությենականության սկզբին եւ որոնում ճշմարտությունը՝ թերեւս վախենալով մահից, ենթագիտակցորեն զգալով, որ ընելի է հեռագիծը մեր ողջ ապրածի: Իսկ հին չինական իմաստնությունն ասում է. «Դաոն է այն ակունքը, որից կյանքի բոլոր ձեւերը կյանք ունեն իրենց մեջ: Ով կորցնում է դա՝ մեռնում է: Ով ստանում է դա՝ ապրում է: Դրա հոսքին դեմ գնալ՝ նշանակում է կործանման դիմել: Դրա հոսքի հետ ընթանալ նշանակում է հաջողության հասնել: Ուստի որտեղ կա Դաոն, իմաստունը հարգանք կմատուցի դրան»: Մի փորր եթե խորհենք այս մասին, մեզ տրված թանկ էներգիան գուցե չվատնենք այսպան անտեղի՝ նմանվելով սեփական սվերից սարսափող այն մարդուն, որն ուժասպառության աստիճան փախչում է՝ իրեն կրնկակոխ հետեւող սվերից ազատվելու համար եւ մեռնում է «կյանքից», որովհետեւ մտքով չի էլ անցնում, թե «պարզապես հանգիստ նստելով մի սվերում, կազատվեր իր սեփական սվերից էլ, իր ոտնահետքերից էլ»:

Իր մտահայեցումների մեջ իրականությունից, բառերից ու իրերից անդին, ժամանակների երբեմն անգթ թվացող տարածություններում, իմ զգացողությամբ, հին ու իմաստուն ժամանակների հոգեւոր լիցքեր կրող առանձնահատկությամբ է օժտված գրող, թարգմանիչ Կարպիս Սուրենյանը: Նա հայ մտավորական իրականության մեջ քաղաքակրթության ամենատարբեր շերտեր կրող սակավաթիվ այն գրողներից է, որ կյանքի ընթացքն ապրել է ինքնարտահայտման դժվարին կերպին հավատարիմ, կյանքի առաջադրած բազում հարցերի պատասխանները որոնելով իր ներքին ճշմարտություններում: Գրական վաստակի առաջ հունձով Կարպիս Սուրենյանը ժամանակի մեջ իր դրոշմը թողել է վաղուց արդեն՝ մեր գրական անդաստանում գեղարվեստական արձակ էջերի եւ թարգմանությունների իրոք պատկառելի ժառանգությամբ («Մաքուր ձեռքեր», «Բնիկ որսեղացի՞ ես», «Արեւորդիներ», «Ոգու ամրոցներ», «Երանության կոգին», «Հին պատմություն», «Ճիշը կյանքն է», Դոստոեւսկու «Կարամազով եղբայրներ», Գոլսուորդիի «Ֆորսայթների պատմությունը»: Թվածս գրականությունն արդեն իսկ վկայություն է վերն ասվածի եւ նոր չէ, որ պիտի գնահատանք տրվի գրողի եւ թարգմանչի գրչի վարպետությանը, այնպես որ գրականագիտական վերլուծության հավակնությունից զերծ եւ զուտ ընթերցողական մակարդակում կփորձեմ ներկայացնել «Սարգիս Խաչենց» հրատարակչության վերջերս լույս ընծայած՝ գրողի «Պսակ թարգմանական» ժողովածուն: Արժեքավոր եւ հետաքրքիր մի գիրք, որտեղ Սուրենյանն ի մի է բերել տարբեր տարիներին՝ ֆրանսերենից, գերմաներենից, անգլերենից եւ ռուսերենից կատարած փորձածավալ թարգմանությունները, որոնք լույս են տեսել մամուլում կամ մնացել անտիպ՝ տարբեր պատճառներով:

Համաշխարհային գրականության այս ընտրանին գրողի գեղագիտական հայացքների, լայն առումով աշխարհընկալման դրսեւորման փաստ է անշուշտ: Գրողի հետաքրքրությունների ոլորտը խիստ ընդգրկուն է ու բազմազան (ժանրային եւ ժամանակային իմաստով նաեւ)՝ սկսած հնագույն երկու քաղաքակրթություններից՝ հնդկական եւ չինական, վեդայական գրականության մեջ կենտրոնական տեղ գրավող եւ հնդկական փիլիսոփայական միտքը խտացնող ուպանիշադներից, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների հարթության վրա կյանքի իմաստաբանական կողմը մեկնող չինական գրույցից մինչեւ XIX-XX դդ. եվրոպական գրականություն (Հաուպտման, Էքզյուպերի,Ռ. Ս. Մոեմ, Ֆրանս, Սարոյան, Դոստոեւսկի:) Այստեղ հստակորեն երեւում է գրողի անհատական մոտեցումը գրականությանը, հավատամքն արվեստում եւ հոգեւոր որոնումները, որ է՝ մարդու գոյությենական առեղծվածը, աշխարհի հետ նրա հարաբերակցությունը եւ երազանքը՝ հեքիաթային հեռավոր մոլորակի՝ ազատ ոգու բաղձանքով:

Այս գրքի հրատարակումը ճշմարիտ, մնայուն գրականության վերհիշեցում է նաեւ եւ շատ անհրաժեշտ՝ հոգեւոր-մշակութային, գրական արժեքների վարընթաց մեր ժամանակներում:

Կարեւորենք նաեւ գրքի մեկ այլ առանձնահատկություն: Թարգմանական արվեստի նկատմամբ դեռեւս պատանեկան տարիներից եկած սիրով եւ ինքնաբուխ նվիրումով կատարած այս աշխատանքներից յուրաքանչյուրն ունի իր նախապատմությունը եւ շարժառիթը, որոնց եւ մասնավոր անդրադառնում է գրողը: Պատումի անկեղծությունն ու ամիջականությունն ավելի զգայուն եւ մտերմիկ է դարձնում հեղինակի հաղորդակցումն ընթերցողի հետ՝ ստեղծելով Սուրենյան արվեստագետի, հարուստ ներաշխարհով մտավորականի եւ մարդու ազնիվ կերպարը:

Յուրաքանչյուր թարգմանությանը նախորդող իր խոսքում Սուրենյանը տեղեկություններ է հաղորդում հեղինակի եւ նրա ստեղծագործության, նաեւ շարժառիթների մասին: Երբեւ պատվերով չկատարելով որեւէ գործ, նա աշխատել է հոգու թելադրանքով, հանգամանքների բերումով նաեւ: Թարգմանական արվեստի՝ մշակութային, ճանաչողական, տարբեր ժողովուրդների փոխադարձ մերձեցման եւ փոխըմբռնման նշանակության գիտակցումով հանդերձ գրողը պատասխանատվությամբ է վերաբերվում ինչպես հեղինակին, այնպես էլ ընթերցողին: («Եթե քեզ էլ ուրախություն տա, դիմում է ընթերցողին, ինչպես ինձ է տվել, ես ավելի եւս կուրախանամ»): Լավագույն թարգմանությունները, որոնք համարժեք են հեղինակային ստեղծագործություններին, ըստ Սուրենյանի, արվում են «ստեղծագործաբար թարգմանելու ինքնաբուխ մղումի ու սիրո բնատուր ձիրքի շնորհիվ» եւ ավելի խոր կենսափորձ ու գրական հարստություն են պահանջում:

Առանձին ուսումնասիրության նյութ է Սուրենյանի լեզուն՝ հեղինակային եւ թարգմանական: Հայերենի հմուտ իմացության շնորհիվ, լեզվական նրբություններին քաջատեղյակ, բառի բծախնդիր ընտրությամբ նրա թարգմանությունները հնչում են բնագրային հարազատությամբ: Յուրաքանչյուր գործ ընթերցողին է ներկայացվում լեզվամտածողության ուրույն ոճով, ինչպես էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը»՝ զանգի զրնգուն մաքրությամբ՝ մեղեդային, նուրբ, տարաշխարհիկ, Սարոյանի պատմվածքները՝ հին իմաստությունների պես պարզ ու իմաստուն, Անատոլ Ֆրանսի «Կյումեցի երգչի»՝ հարուստ, շքեղ լեզուն՝ հին հայերենի, արեւելահայերենի եւ արեւմտահայերենի հրաշալի համադրումով:

Վեց ամիսների անընդմեջ եւ մանրակրկիտ աշխատանքների ընթացքում գրողի բծախնդիր հայացքի ներքո վերամշակվել եւ բյուրեղացել են նախկին թարգմանությունները՝ հավատարիմ բնագրային ոճին եւ իմաստային ամբողջականությանը: Հայ ընթերցողին ներկայացվող ուշագրավ թարգմանությունների այս ժողովածուն շահեկան է հատկապես նրանց ուղեկցող գրողի հիշատակություններով, ինքնատիպ խոսք-էսսեով, որոնց բնորոշ են հեղինակի կենսափիլիսոփայական խորը ընդհանրացումները՝ վերաբերած հոգեւոր անհատական փորձառությամբ, տիեզերական հավերժահոսում մարդու եւ բնության փոխակերպում-զարգացումների գաղտնախորհուրդ ընթացքի, մարդկային կյանքի բուն նպատակի որոնումներով եւ իր սեփական պատասխաններով:

«... Քո լավը տալ մարդկանց, ու տալով՝ դուրս գալ ինքդ քեզնից, հաղթահարել անհատի գոյությենական մենությունդ, շենանալ հոգեպես, քեզ տրված լավն էլ ընկալելով: Ու ընկալես անմահ իմաստուն Սոկրատեսի էլ ձայնը քո մեջ, այն սքանչելի աղոթքը, որով նա ներքին գեղեցկություն էր հայցում աստվածներից: Ճշմարիտ է, ճշմարիտ, ներքին գեղեցկությունն է, լայն իմաստով սերն է, որ ի զորու է քո իսկ աչքերով լուսավորելու եւ ի հայտ բերելու բուն հմայքը կյանքի՝ աստղազարդ երկնքի խորհուրդից մինչեւ առօրյա մտերմիկ իրողությունները քո շուրջ, ինչպիսին էլ լինեն վերիվայրումները քո վիճակներում: Հին աստվածները վաղուց լռել են, այսպես ասած, բայց չէ՞ որ, ըստ էության, մարդկային իմաստությունն ինքն իրեն է ուղղում սոկրատյան այդ սքանչելի աղոթքը, հենց ինքնադատարակությամբ աճեցնելու, ծաղկեցնելու ներքին գեղեցկության բնատուր սերմերը մարդու մեջ, միաժամանակ ջանալով մաքրել հոգի սերմերի արձակած որոմներից: Այստեղ էլ սակայն, իր ձայնն է միացնում հին չինացի մեծ բանաստեղծ Քո Ցյուին այն հարցով, թե ինչպես անես, որ ծաղիկներդ չվնասվեն, երբ ջանում ես մաքրել որոմներից»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոմիտասի երաժշտագիտական ժառանգությունը՝ անգլերենով

Կոմիտասի երաժշտագիտական ժառանգությունը հարստացավ վերջերս անգլերենով լույս տեսած նրա հոդվածներով եւ ուսումնասիրություններով:

«Komitas: Essays and Articles» աշխատությունը Վաչե Պարոնյանի թարգմանությամբ լույս է ընծայել Կալիֆորնիայի «Drazark Press» հրատարակչությունը, տպագրության հովանավորն է Նուբար Ուզունյանը:

Ժողովածուն ամփոփում է Կոմիտաս Վարդապետի ինքնակենսագրականը, երաժշտագիտական հիմնասյուն աշխատությունները՝ հայ ժողովրդական եւ հոգեւոր երաժշտությանը նվիրված, ինչպես նաեւ մեծագույն հետազոտական եւ պատմական արժեք ներկայացնող նամակներ: Դրանց թվում. 1907-ին Բեռլինից գրած «Examining Committee for Music» կազմակերպության նախագահ Վահրամ Մանկունուն եւ 1910-ին Էջմիածնից գրված կաթողիկոս Մաքսիմոս Իզմիրլյանին:

Գիրքը պարունակում է անհրաժեշտ նոտային օրինակներ, Կոմիտասի գրչին պատկանող տեսական աշխատություններ եւ Վարդապետի մասին լույս տեսած գրականության ցանկեր:

Բարձրաճաշակ է հատորի գեղարվեստական ձեւավորումը, որում զետեղված են մեծն Կոմիտասի գեղանկարչական լավագույն դիմանկարների լուսանկարները:

Մեծ գնահատման ու երախտագիտության են արժանի հիշյալ կարեւոր նախաձեռնման հեղինակները եւ այն իրագործողները: Այսպիսով, հայոց հանճարի՝ XIX դ. երկրորդ-XX դ. առաջին կեսերի միջազգային չափանիշներով մեծ երաժշտական բանահավաքի, ֆոլկլորագետի, երաժշտաբանի, ազգային երգարվեստի մարգարիտների անգուգական մշակողի մասնագիտական բարձրակերտ մտքի թռիչքն ու այսօր էլ իր արդիականությունը պահպանող միտումները, շնորհիվ անգլերենով հրատարակված լինելու՝ հասու կդառնան աշխարհին: Հաղթահարելով ազգային շրջանակը, հնարավորություն կունենան դուրս գալու միջազգային ասպարեզ, եւ, համոզված ենք՝ պիտանի լինելու ու հաստատվելու համաշխարհային երաժշտագիտական մտքի շտեմարանում:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՆՔ՝ ՈՒՐԻՇՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Հայաստանը ավստրալիացի գրողի վեպում

Ջոան Լանդնի «Գիլգամեշ» գիրքը

«Գրածս պատմությունները բոլորովին էլ արտասովոր չեն: Դրանք ծնունդ են առել ինչ-որ պատկերից կամ երազից, բայց ոչ շոշափելի կամ գիտակցական բանից: Դրանք սկիզբ են առել ինչ-որ տեղ եւ ինչ-որ ժամանակ: Այս վեպը հատկապես ծնվել է երազներից, որոնք յուրահատուկ որակ եւ թրթիռ են առաջացնում», ասել է ավստրալիացի ճանաչված գրող Ջոան Լանդնը, խոսելով իր նոր գրքի՝ «Գիլգամեշի» մասին:

Ասուրա-բաբելական դյուցազնավեպ, հերոսի նման Լանդնի վեպում էդիթ անունով մի ավստրալուհի հատկանշական ճանապարհորդություններ է կատարում երկրորդ աշխարհամարտից առաջ եւ հետո: Արեւմտյան Ավստրալիայից էդիթն ուղեւորվում է Լոնդոն, Հայաստան, Միջին Արեւելք եւ ապա վերադառնում հայրենիք: Այն հարցին, թե ինչն է մղել իր հերոսին Հայաստան ուղարկելու, հեղինակը պատասխանել է. «Երազներս շփոթի էին մատնել ինձ: Տեսնում էի օտար մի երկիր, որի պատկերներն ապշեցնաբար հյուսվում էին ինչպես ցանկացած երեւակայական գործի մեջ: Երբ մի օր այդ պատկերներն ու իրադարձությունները պատմեցի բազմաթիվ ճամփորդություններ կատարած իմ բարեկամներից մեկին, նա զարմանքով բացականչեց. «Դու Հայաստանն ես նկարագրում»: Այդ խոսքերից ոգեշնչված, սկսեցի հավելյալ ուսումնասիրություններ կատարել եւ խորանալ հայկական մշակույթի եւ պատմության մեջ: Տեղեկացա, որ դարեր շարունակ պարսիկներ, մոնղոլներ, թուրքեր եւ այլ ազգություններ հարձակվել են հայկական քաղաքակրթության վրա, որը հակառակ կրած ծանր կորուստներին՝ շարունակել է գոյատեւել»:

Ջոան Լանդնը չի բավարարվել լոկ ուսումնասիրություններ կատարելով: Նա Հայաստան է այցելել 1997-ին, երբ «Գիլգամեշ» վեպն արդեն ձեւավորման ընթացքում էր, եւ վերահաստատել է շատ բան, որ մինչ այդ միայն երազներում էր տեսել կամ երեւակայել: «Շատ անհանգիստ կզգայի ինձ, եթե Հայաստան այցելած չլինեի, նրա օդը չշնչեի եւ քայլելով նրա փողոցներում նրա իրականությունն ապրած չլինեի», ասել է նա իր այցելության առնչությամբ ավստրալիական «Դի էյջ» թերթի լրագրողին, որի վերջերս լույս ընծայած հոդվածից էլ գրողի մասին այս նյութը տպել է Կանադայում լույս տեսնող ՌԱԿ «Արագայ» շաբաթաթերթն իր նոյեմբերի 26-ի համարում:

Ջոան Լանդնի մյուս գրքերի շարքում թերթը նշում է «Սիսթր Շիփս» պատմվածքների ժողովածուն, որը 1986-ին արժանացել է Արեւմտյան Ավստրալիայի «Ուիք լիթրըրի» եւ «Դի էյջ Բուք ըվ դը Յըր» մրցանակներին եւ «Նամակ Կոստանտինին» երկրորդ ժողովածուն, որն արժանացել է «Սթիլ Ռուդ» եւ «Գրեմիթեր» մրցանակներին: Հեղինակն այս ամիս Մելբուռնում կայացող «Էյջ Մելբուռն ռայթրզ» փառատոնի հյուրն է:

Հ. Ծ.

Մարզական

Հայ լեգեոներների շարքը սպարանում են

Արդեն շուրջ մեկ ամիս ավարտվել է ֆուտբոլային մրցաշրջանը եւ թիմերն աստիճանաբար սկսում են նոր մրցաշրջանի նախապատրաստությունը: Մենք ընթերցողներին տեղեկացրել էինք, որ ձմռան այս շրջանում հայաստանցի որոշ ֆուտբոլիստներ մեկնել են Իրան եւ Լիբանան: Բեյրութի ՀՄՄ-ում Գագիկ Սիմոնյանի եւ Վիգեն Աբրահամյանի հետ հանդես կգա նաեւ «Արարատի» կիսապաշտպան Համլետ Մխիթարյանը: Իսկ ահա, «Զվարթնոցի» ռմբարկու Մեր Ավանեսյանը մինչ ՀՀ առաջնության մեկնարկը հանդես կգա Իրանում: Ավելի վաղ այդ երկիր էին մեկնել «Արարատի» ֆուտբոլիստներ Մայիս Ազիզյանը, Արամ Սարգսյանն ու Արշակ Ամիրյանը, «Փյունիկի» խաղացողներ Արթուր Քոչարյանը, Արմեն Սանամյանն ու Սլավա Սուրիասյանը: Առաջիկայում հայ լեգեոներների թիվը կաճի: Մասնավորապես, ուկրաինական թիմերը հետաքրքրվում են «Սպարտակի» մի քանի ֆուտբոլիստներով:

Իսկ ինչպիսի՞ն են գործերը մեր այն լեգեոներների, որոնք անցած մրցաշրջանն անցկացրին արտասահմանյան թիմերում: Նախկին շիրակցիներ Հարություն Վարդանյանի եւ Արթուր Պետրոսյանի համար մրցաշրջանը կարելի է հաջողված համարել: Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստներն իրենց լավագույն կողմերով դրսեւորեցին զվեյցարական «Յանգ Բոյզում»՝ նպաստելով առաջնության առաջին փուլում թիմի առջեւ դրված հիմնական խնդրի կատարմանը: Ֆուտբոլասերները հավանաբար տեղյակ են, որ «Յանգ Բոյզը» տեղ է զբաղեցրել ուժեղագույն ութնյակում եւ իրավունք ստացել եզրափակիչ փուլում պայքարելու առաջնության պարգեւների համար: Նշենք, որ առաջնության հանդիպումներում ստացած գնահատականների միջին թվանշանով Հարություն Վարդանյանը ճանաչվել է երկրի լավագույն ֆուտբոլիստ, ինչպես նաեւ լավագույն պաշտպան: Լավագույնների ցանկում Արթուր Պետրոսյանը 6-րդն է, իսկ կիսապաշտպանների մեջ՝ 2-րդը: Ինչպես միշտ, իր բարձրության վրա էր Սարգիս Հովսեփյանը: Նա, անշուշտ, հայ լեգեոներներից լավագույնն է եւ իր բարձր կարգը հաստատեց ոչ միայն «Զենիթում», այլ նաեւ ՀՀ հավաքականում: «Կոիլյա Սովետովում» հանդես եկող Կարեն Դոխոյանի հաստատեցին էլ ռուսական մամուլում դրվատանքի շատ խոսքեր գրվեցին: Ցավոք, Կարենը վերջերս երեւանում վիրահատվեց եւ բժիշկների խորհրդով սահմանված է մարզումները սկսել միայն հունվարի կեսերին: Ի տարբերություն վերը նշված ֆուտբոլիստների, ՀՀ հավաքականի անդամ Ալբերտ Սարգսյանի գործերը «Լոկոմոտիվում» հաջող չընթացան: Դեռեւս ամռանը երեւանում մեր հետ ունեցած զրույցի ժամանակ Ալբերտը հայտնել էր, որ

իր եւ գլխավոր մարզիչ Յուրի Սյոմինի հարաբերությունները ջերմ չեն, որի հետեւանքով էլ ինքը հազվադեպ էր տեղ գտնում թիմի հիմնական կազմում: Դեկտեմբերին լրացավ «Լոկոմոտիվի» հետ Սարգսյանի կնքած պայմանագրի ժամկետը: Սյոմինը հայտարարել էր, որ ինքը դեմ չէ Սարգսյանի՝ այլ թիմ տեղափոխվելուն: Հայ ֆուտբոլիստը հրավեր էր ստացել բուլգարական «Լեւսկի» ակումբից, սակայն պայմանագրի կետերի շուրջ համաձայնություն ձեռք չէր բերվել: Առայժմ Սարգսյանը մնում է «Լոկոմոտիվում»: Նրանով հետաքրքրվում են նաեւ ռուսաստանյան այլ ակումբներ եւ բացառված չէ, որ Սարգսյանն ընդունի որեւէ թիմի հրավերը:

Սարգիս Հովհաննիսյանը, որը հայ առաջին լեգեոներն էր Ռուսաստանում, հանդես էր գալիս ՌԴ առաջին դիվիզիոնի առաջնության մասնակից Կազանի «Ռուբինում»: Ցավոք, վերջին տարիներին վնասվածքներն անընդհատ հետաքրքրում են 33-ամյա ֆուտբոլիստին, որի պատճառով նրան չի հաջողվում կայուն խաղ ցուցադրել: Սարգիսը մեկնել է Շտուտգարտ, որտեղ պետք է վիրահատվի: ՀՀ հավաքականի հարձակվող Անդրեյ Մովսիսյանը եւս 2 տարով երկարաձգել է պայմանագիրը «Սատուրնի» հետ: Ռոման Բերեզովսկին Մոսկվայի «Տորպեդոյում» իրեն վատ չդրսեւորեց, թեեւ եղան առանձին ձախողումներ:

ՀՀ առաջնությունների ամենաարդյունավետ ֆուտբոլիստը՝ Արսեն Ավետիսյանը, դեռեւս անցյալ մրցաշրջանի կեսերից մեկնեց Սոչի, որտեղ հանդես եկավ ՌԴ առաջնության երկրորդ դիվիզիոնի մասնակից «Ժեմչուժինայում»: Ուրախալի է, որ Արսենն այնտեղ էլ աչքի ընկավ արդյունավետ խաղով: Ընթացիկ առաջնությունում նա 18 գնդակով դարձել է թիմի լավագույն ռմբարկու: Ակումբի հետ նրա պայմանագրի ժամկետը լրանում է 2002 թ. դեկտեմբերին: Չնայած դրան, ակումբը նրան տրանսֆերի է հանել: Արսենով հետաքրքրվում են ՌԴ առաջին խմբի, ինչպես նաեւ Չինաստանի թիմերը: Եթե գործարքը չկայանա, Ավետիսյանը մտադիր է շարունակել ելույթները «Ժեմչուժինայում»:

Արա Հակոբյանը խաղում էր Դոնեցկի «Մետալուրգում»: Վստահ է խաղում Ռոմիկ Խաչատրյանը Կիպրոսի «Օլիմպիակոսում», իսկ ՀՀ հավաքականի ավագ երվանդ Սուրիասյանը՝ Հունաստանում:

Նարինե Գասպարյանը միջազգային վարպետ

Օրերս շախմատի համաշխարհային ֆեդերացիան (ՖԻԴԵ) միջազգային վարպետի կոչում է շնորհել վանաձորցի 19-ամյա շախմատիստուհի ՆԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ: Նարինեն արդեն ստացել է համապատասխան հավաստագիրն ու միջազգային վարպետի կրծքանշանը: Նման կոչման հանրապետությունում արժանացել են ընդամենը երկու շախմատիստուհի: Իսկ Լոռու մարզում նա այդ առումով միակն է:

Հաջորդ քայլը, հուսով ենք, կլինի գրոսմայստերի կոչմանն արժանանալը: Դրա համար կան բոլոր նախադրյալները:

Իհարկե, լավ կլիներ, որ տաղանդավոր շախմատիստուհին ունենար համակարգիչ, հովանավորներ (հուսանք, որ գոնե այստուհետ նրան կայուն աջակցողներ կլինեն):

Մ. ՄԵԿՈՅԱՆ

Վալերի Գլադիլինը «Միկայի» մարզիչ

«Ազգը» ժամանակին տեղեկացրել էր, որ «Միկա» ակումբում սպասվում են լուրջ փոփոխություններ: Մասնավորապես, որ ռուսաստանցի Վալերի Գլադիլինը հրավիրվելու է որպես թիմի գլխավոր մարզիչ: Նա այդ պաշտոնում կփոխարինի Սամվել Պետրոսյանին: Իր պարտականությունների կատարմանը Գլադիլինը կանցնի հունվարի սկզբից:

Փոխվել է նաեւ ակումբի նախագահը: Պաշտոնից ազատված Գրիգորի Կագրամանովին ամենայն հավանականությամբ կփոխարինի «Զվարթնոցի» ներկայիս նախագահ Արտակ Մնացականյանը: Հունվարի սկզբին այս հարցը եւս պաշտոնապես կլուծվի:

ԽԱՉԲԱՌ



Ուղղահայաց

1. Աշխարհահռչակ ֆուտբոլիստ: 2. Հայ դերասանուհի: 3. Վարչական միավորի անվանում Իրանում: 4. Ռուսական երաժշտական նվագարան: 5. Ե. Վախթանգովի հայ հետեւորդը: 9. Բուենոս Այրեսում գործող հայկական պարախումբ: 10. Վրաստանից անկախանալ ցանկացող ինքնավարություն: 13. Ասված նրան ստեղծեց աշխարհի արարման վեցերորդ օրը: 14. Հայ պատմաբան, հասարակական գործիչ, Ղարաբաղյան շարժման ջատագով: 15. Ուկրաինացի շախմատիստ: 16. «Քրեական ընթերցելիք» ֆիլմի ռեժիսորը: 17. Հաղթանակի ասվածուհին: 19. Հերոսուհի «Ամերիկյան ողբերգություն» վեպում: 21. Նահանգ ԱՄՆ-ում: 25. Աշխարհի 2000-2001 թթ. լավագույն ֆուտբոլիստ, «Ոսկե գնդակ» մրցանակի դափնեկիր: 26. Ալկալոիդ, որը 1820-ին առաջին անգամ անջատել են ֆրանսիացի քիմիկոսներ Պ. Պելյետն եւ Ժ. Կավանտուն: 30. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նախագծի հեղինակը: 31. Ֆ. Ֆելլինիի ֆիլմերից (Իտալիա, 1969): 32. «Վաթեոլոո» կինոնկարի ռեժիսորը (Իտալիա-ԽՍՀՄ, 1970): 33. Բարբարա ...: 35. Հերոս «01-99» կարճամետրաժ կինոնկարում: 36. Մշակույթի գործիչներին կատարած աշխատանքների համար տվող դրամական վարձատրություն: 41. Դույլ, միտք, որ առաջ է քաշում հեղինակն իր աշխատության մեջ: 42. ... Աբաս Կաշինա: 47. Միջին դարերում այսպես էին անվանվում երգ ու երաժշտությամբ ուղեկցվող դրամաները: 48. Կինոռեժիսոր Զեյն Քեմփիոնի ֆիլմը: 49. «Սոլյարիս» ֆիլմի ռեժիսորը: 51. Հայ գուսան: 53. Փալան, ...: 57. Դամասկոսի արուհիում ապրած եւ ներբողներ, նակահիներ, գինեծներ ստեղծած արաբ բանաստեղծ: 58. ԱՄՆ պետքարտուղար: 62. Թունավոր սարդ: 63. Իբրեւ բանկագին հիշատակ պահվող նվիրական իր: 64. Չինամթերք: 65. Գավի փոքր եղբայրը: 66. Քաղաք Ռուսաստանում: 69. Գերմանիայում եւ այլ երկրներում վարչատեսի անվանում: 73. Լիճ Ֆինլանդիայում: 74. Ծաղկաբույլ: 77. Հերոսուհի Նար-Դոսի «Պայքար» վեպում:

Հորիզոնական

6. Հայաստանի առաջին հանրապետության դեսպանը Վաշինգտոնում: 7. Վրաց շախմատիստուհի: 8. Թեհրանում լույս տեսնող հայկական թերթ: 11. Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ճարտարապետը: 12. «Նռան գույնը» կինոնկարի ռեժիսորը: 18. Պետական մրցանակի արժանացած հայ նկարիչ: 20. Չին շախմատիստուհի: 22. Իտալացի գրող: 23. Երկրագնդի ամենաբարձր ջրվեժը: 24. Գր. Զոհրապի նովելներից: 27. Հասկացություն-բառ երեւույթի, առարկայի որեւէ հատկությունը կամ որակը բնորոշող: 28. Աշխարհի շախմատի առաջնությանը մասնակցած շախմատիստուհի: 29. Ռուսական ժողովրդական պատմողական երգ-պոեմ հերոսների եւ դյուցազունների մասին: 34. Այս բույսից աղցան են պատրաստում: 37. Այգիներում բնակվելու փոխարեն կացարան: 38. Արեւելյան պոեզիայում պոեմի գլուխ: 39. Խորհրդային Հայաստանում առեւտրային կազմակերպություն: 40. Հայկական լրատվական գործակալություն: 43. Էգ ոչխար: 44. Արվեստի եւ գրականության ընդհանուր անվանումը: 45. Ռեժիսոր Ժակ Բեկերի ֆիլմը (Ֆրանսիա, 1957): 46. Ամուսնուն կամ կնոջը կորցրած մարդ: 50. Ուզբեկ գրող: 52. Ստամբուլում լույս տեսնող հայկական թերթ: 54. Գերմանական դեղագործական հայտնի ընկերություն: 55. Խեղճ ու կրակ գյուղացի երեխայի կերպար Հովի. Թումանյանի գործերում: 56. Եգիպտահայ մեծահարուստ, հասարակական գործիչ: 59. Հերոսուհի «Կարապի լիճը» բալետում: 60. Օպերային հայ երգչուհի: 61. Նյարդային բջիջ: 67. Փարիզում լույս տեսնող հայերեն թերթ: 68. Հայոց այս թագուհու անունով Թորոս Ռոսլինը Ավետարան է նկարազարդել: 70. Ռուս շախմատիստ: 71. Հայ ազատագրական շարժման գործիչ: 72. Ռուսական էստրադայի աստղ, երգչուհի: 75. «Ճիչ» ֆիլմի ռեժիսորը (Իտալիա-ԱՄՆ, 1957): 76. «Սեւ կատու, սպիտակ կատու» ֆիլմի բոսնիացի ռեժիսորը: 78. Այս սարքի օգնությամբ կարելի է մեծացնել ամպերմետրի չափման տիրույթը: 79. Վրաստանի խորհրդարանի նախագահը: 80. Ա. Չելենտանոյի մասնակցությամբ նկարահանված ֆիլմ:

Նախորդ սկանվորդի պատասխանները

Ուղղահայաց

1. «Չոչարա»: 2. Մորոզեւիչ: 3. «Բլեֆ»: 4. Ինկ. 7. Աղ: 9. Որա: 10. Արա: 13. Երախ: 14. Պո. 16. Լիոն: 19. Մարգ: 21. Միոն: 24. Տուլա: 25. Ազաս: 27. Սանր: 28. Ալբերտ: 30. Արեւելք: 33. Ագաթ: 34. Սաֆին: 36. Ագաթ:

Հորիզոնական

5. Մորո: 6. Ալան: 8. Ռոպե: 11. Որ: 12. Ֆե: 15. Զալ: 17. Արեւ: 18. Ամ: 20. Իսո: 22. Խան: 23. Վոյնիչ: 26. Զուգ: 29. «Ալանիա»: 31. Էլար: 32. Տասն: 35. Եւ: 37. Գար: 38. Սենե: 39. Գրաֆ: 40. Լիա: 41. Իա: 42. Ավ: 43. Իվ: 44. Նորվ: 45. «Ան»:

Օրվա հետքերով

ԲՐՅՈՒՍԵԼ

Սերժ Սարգսյանը մասնակցեց Եվրալանսյան գործընկերության խորհրդի նիստին

ԵՐԵՎԱՆ, 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը Բրյուսելից վերադարձավ Հայաստան, որտեղ Ս.Սարգսյանը մասնակցեց դեկտեմբերի 18-ին կայացած Եվրալանսյան գործընկերության խորհրդի պաշտպանության նախարարների հերթական նիստին: Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության, նիստը ընդարկել է ահաբեկչության եւ անվտանգության համար ոչ սովորական սպառնալիքների դեմ պայքարի ոլորտում համագործակցության հեռանկարները, ինչպես նաեւ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի ընթացքը:

Իր ելույթում ՀՀ պաշտպանության նախարարը հիշեցրել է, որ Հայաստանն առաջիններից էր, որ դատապարտեց ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները եւ առաջարկեց իր աջակցությունը հակաահաբեկչական պայքարի հարցում: «Վերջերս Հայաստան կատարած իր այցի ժամանակ քարտուղար Ռամսֆելդը նշեց, թե որքան օգտակար է այն տեղեկատվական օգնությունը, որ ցուցադրեց Հայաստանը. դա եւս մեկ անգամ վկայում է, թե որքան կարեւոր է աշխարհի բոլոր պետությունների համագործակցությունը հակաահաբեկչական պայքարում անկախ նրանց աշխարհագրական դիրքից եւ չափից», նշել է Ս. Սարգսյանը:

Ադրբեջանի պաշտպանության նախարարն իր ելույթում նույնպես խոսել է հակաահաբեկչական պայքարի ընթացքի մասին: Ավելի ուշ ադրբեջանական պատվիրակությունը, խախտելով ընթացակարգային կանոնները, փորձել է ծփոթության մեջ գցել համաժողովի մասնակիցներին, գրավոր տեսքով տարածելով նախարարի ելույթի մեկ այլ տեքստ, որը ոչ մի ընհանուր բան չուներ իրականում արված հայտարարության հետ եւ ամբողջությամբ ուղղված էր Հայաստանի հասցեին զրպարտանքների տարածմանը: Ի պատասխան ՀՀ պատվիրակությունը գրավոր հայտարարություն է տարածել, մատնանշելով կեղծիքը եւ գործնական փաստեր բերելով Ադրբեջանում ահաբեկչական խմբերի գործունեության վերաբերյալ: «Ցավոք, ԱՄՆ-ում տեղի ունեցած դժբախտությունը շահարկվում է որոշ պետությունների կողմից՝ այն նեղ ազգային շահերին ծառայեցնելու նպատակով», նշվում է հայտարարության մեջ:

ՀՀ պաշտպանության նախարարն աշխատանքային զրույցներ եւ մտքերի փոխանակում է ունեցել ՌԴ պաշտպանության նախարար Իվանովի, ԱՄՆ-ի պաշտպանության քարտուղար Ռամսֆելդի, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ռոբերտսոնի եւ Ռումինիայի պաշտպանության նախարարի հետ:

Նշենք, որ Եվրալանսյան գործընկերության խորհրդի պաշտպանության նախարարների հանդիպումները տեղի են ունենում տարին 2 անգամ՝ Բրյուսելում: Այդ կազմակերպությունը ձեւավորվել է 1997թ-ին, որի նպատակն է համագործակցություն ծավալել ՆԱՏՕ-ի անդամ պետությունների եւ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին անդամակցող պետությունների միջեւ Եվրալանսյան տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության գործուն համակարգ ստեղծելու ուղղությամբ:

ARMENTEL

Հայտարարություն

Արմենտելը հայտարարում է մրցույթ՝ «Նոր Նորք» թաղամասում թվային ԱՀԿի համար նախատեսված շենքի կառուցման համար:

Այն կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել մրցույթին, պետք է

■ունենան տվյալ աշխատանքների կատարման համար պահանջվող պետական լիցենզիաներ,

■գրանցված լինեն պետական ռեգիստրում:

Մրցույթի անցկացման պայմանները եւ աշխատանքային ծավալները շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով.

Արմենտել ՀՁ, Սիարոնյան 2, 6-րդ հարկ, 634 սենյակ, հեռ. 28 70 66:

Առաջարկի հետ միասին մասնակիցները պետք է ներկայացնեն բանկի կողմից թողարկված երաշխավորագիր /մասնակցության համար/: Մասնակցության երաշխավորագրի մանրամասները նշված են մրցույթի հրավերի համապատասխան կետում:

Առաջարկների ներկայացման վերջին ժամկետը 2002 թ.-ի հունվարի 4-ը, ժամը 12:00-ն:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL

Հայտարարություն

Արմենտելը հայտարարում է մրցույթ աշխատանքների անվտանգությունն ապահովող միջոցների (հատուկ հագուստ, հատուկ կոշիկ) մատակարարման համար:

Մրցույթի անցկացման պայմանները, ինչպես նաեւ պահանջվող ապրանքների տեխնիկական մասնագրերը շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով.

Արմենտել ՀՁ, Սիարոնյան 2, 6-րդ հարկ, 634 սենյակ, հեռ. 28 70 66:

Առաջարկները պետք է ներկայացվեն վերոհիշյալ հասցեով մինչեւ 2001 թ.-ի դեկտեմբերի 28-ը, ժամը 12:00-ն:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

For Your Internal News of Armenia

www.azg.am

Log on to In English, Russian, Armenian and Turkish

Սնուցի հայտարարություն

Մաշտոցի պող. կենտրոնական մասում վաճառվում է օրիգինալ դիզայնով կաղապար նորոգված մոտ 1000 քմ առեւտրային եւ հանրային սննդի տարածք: Մեկնարկային գինը համարժեք է 494.000 ԱՄՆ դոլարին: Սնուցը կայանալու է 27.12.01 թ. Թեթեյան կենտրոնում: Սնուցը հայտարարվել է 27.11.01 թ. պաշտոնական ծանուցմամբ «Ազգ» թերթում: Մանրամասների համար դիմել «Հարությունյան եւ գործընկերներ իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ, հեռ. 559501, բջջ. 400749, auction@legal.am:

Արժեթղթերի գնման/վաճառքի համար դիմել Հայաստանի Ֆոնդային Բորսայի անդամ բրոքերային ընկերություններին

Արդշինբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Թումանյան 28/20
Հեռ.՝ 542674

Արմենբրոկ ՓԲԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
Հեռ.՝ 528986

Ալինվեստ ՍՊԸ
ք. Երեւան, Ռոստովյան 21, բն. 41
Հեռ.՝ 454112, (09) 429412

Ասպետ ՍՊԸ
ք. Երեւան, Ե. Քոչար 21/1, բն. 37
Հեռ.՝ 571218

Արժեքդեր Կենտրոն ՍՊԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
Հեռ.՝ 525801, 581578

Աստղրոք ՍՊԸ
ք. Երեւան, Կոմիտաս 22/50
Հեռ.՝ 222725, 278469

Ալիխանյան Բրոքեր ՍՊԸ
ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի 45ա
Հեռ.՝ (051) 40297

Այս երգումգի ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 71/27
Հեռ.՝ (051) 22422

Երեւան-Բրոքեր ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 2/8
Հեռ.՝ 524357, 151820

Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան, Զաֆյան 8, բն. 30բ
Հեռ.՝ 567767, 582478, 562404

Կապիտալ Ինվեստ ՍՊԸ
ք. Երեւան, Ագաթանգեղոսի 7
Հեռ.՝ 569680, 526417

Նորդ-Վեստ-Ինվեստ ՍՊԸ
ք. Գյումրի, Աբովյան 247
Հեռ.՝ (041) 30868

Ս.Գ.Ս. ՍՊԸ
ք. Գյումրի, Աբովյան 242-1
Հեռ.՝ (041) 22184, (051) 23109

Պրիվատ Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան, Նալբանդյան 50/ 26
Հեռ.՝ 521812, 521051, 528778

Վինկո ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 24, բն. 5
Հեռ.՝ 531805

Տոնաշ ՍՊԸ
ք. Երեւան, Դեղատան 2
Հեռ.՝ 545477, 545407

ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դիմեք «Ինֆորմացիայի ազատության կենտրոն», երբ պաշտոնյաները չեն պատասխանում Ձեր դիմումներին:

Հասցե. ք. Երեւան, Դեղատան փ. 4, բն. 1ա
Հեռ. (3741) 524105, 529240
էլ. փոստ shushan@internews.am

Armex

Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

2001 թ. դեկտեմբեր 20-ի առեւտրային նստաշրջան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

Թողարկող Issuer	Հատ. ABBR	Հարթակ Listed	Գնում* Bid			Վաճառք* Ask			Կատարված գործարքներ Transactions				
			Լավագույն գին Best price	Միջ. կշռ. գին Avg. price	Ընդհ. քան. Total qnt.	Լավագույն գին Best price	Միջ. կշռ. գին Avg. price	Ընդհ. քան. Total qnt.	Նվազ. գին Day low	Առավ. գին Day high	Միջ. կշռ. գին Avg. price	Փոփ.% Avg%	Ծավալ (հայ. դրամ) Volume
Շաքարի Գործարան (ԱՇԻՆՅԱՆ)	ACHI	B											
Արկածի Բաշխման Կազմակերպություն ԱՍՄ	AGBM	B											
Այրարատի Պահածոների Գործարան	APAH	B											
Մրգամթերքային	APAK	B											
Հայ Գործարարների Ընկերություն	ARBC	B											
Արարատի Էլեկտրական Ցանցերի (ԱՆԱՍՈՐ)	ARDV	B											
Արցախլուսին	ARSL	B											
Արտեքս	ARTX	B											
Արեւ Սեւան	ASEV	B	1,000.0	1,000.0	1								
Աստղակոնսալտինգ (ԱՐՄՏԻԿ)	ASTM	B											
Ավտոգազեռգայտերի Գործարան	AVAG	B											
Ավիահամալիր	AVHM	B	90.0	90.0	80								
Ավտոբուս	AVTB	B											
Ավտոմատիկա Գործարան	AVTM	B	300.0	300.0	1								
Իջեւանի Բենզոլորդ ԿՍ	BENT	B											
Բիեմ Պլաստիկ	BHSP	B											
Շարեցեռ Գործարանային Գործարան	CHGG	B											
Կոմերցիալ Մենեջմենթ	CPMT	B											
Դալիջանի Արտ. Ցր. ՍՊԿ	DAJK	B											
Դաստակերտի Բուժտեխ. Գործարան	DBUG	B											
Դալիջանի Սոդոպ. Հիմ.	DJAH	B											
Ջրակապերտրոն	DZKT	B											
Էլեկտրաշնչգրիտսարք	ECHS	B											
Էջմիածնի Սարքաշեն. Գործարան	ECSG	B											
Եր. Էլեկտրաշարժիչների Գործարան	EELJ	B											
Երֆրեզ	EFRZ	B	1,400.0	1,400.0	3								
Եր. Հիդրոդիզայներային Գործարան	EHHG	B											
Եր. Ընկերային Գործարան	EJWG	B											
Երկաթբետոն 7	EKB7	B											
Եր. Կաշվե Գալանտերեայի Ֆաբրիկա	EKGF	B											
Եր. Կենցաղային Քիմիայի Գործարան	EKQG	B				900.0	900.0	33					
Էլեկտրամարտակ	ELAP	B	470.0	470.0	10								
Էլեկտրոն	ELEK	B											
Էլեկտրամեխանիկական	ELMJ	B											
Էլեկտրասարք	ELSO	B											
Եր. Լուսատեխնիկական	ELUS	B											
Ծղնաձորի Սարքաշինական Խմբերի Ֆաբրիկա	EMKFCO	B	500.0	500.0	100								
Էլեկտրամեքանիկական	EMQR	B											
Թալին	EMTA	B											
Էջմիածնի Պլաստմասսա Գործարան	EPLG	B											
Երազ	ERAZ	B											
Եր. Ժամացույցի Գործարան	ERJG	B	1,350.0	1,350.0	20								
Երկաթբետոն	ERKB	B											
Եր. Շամպայնի Գինիների Գործարան	ESHG	B											
Սասունի ՅԵՏ Գործարան (ԵՐԵՎԱՆ)	ETCG	B											
Եր. Տեխնոլոգ Սարք.երի Գործարան	ETXS	B											
Վան ԱՅԾ (ԵՐԵՎԱՆ)	EVAF	B											
Եր. Ոսկերչական Գործարան 1	EVGI	B											
Սանվ	GANV	B											
Գարնի	GARN	B											
Գորիսի Գաստրոն	GGAM	B											
Գեղամա	GGMA	B											
Գեղհարքի Սարի Պահածոների ԿՍ	GMPG	B											
Հայգործանկ	HAGB	B											
Հաշտարշ	HASH	B	100.0	100.0	3,180								
Հատս	HATC	B											
Հայծնամատոս	HATS	B	1,400.0	1,400.0	30								
Հ.Է.Դ. Հայաստան Գրուպ	HEHG	B	450.0	450.0	10								
Հայէլեկտրամեքենա	HELM	B											
Հայկաբել	HKBL	B											
Հայթամեքենա	HQMQ	B											
Հայթշրխանամագործ	HSHN	B											
Ջերմոցկ Պանելային Ձրի Գործ.	JHJG	B											
Կաշի	KASH	B											
Կամոիրշրխ	KMSH	B											
Կոնյակ	KNET	B											
Կանաչ	KNKA	B											
Ռելե Գործ. (Կապան)	KREL	B											
Սաքուր Երկաթի Գործ.	MQER	B	2,220.0	2,220.0	5								
Սարդարապատ	MRSH	B											
Մերձմոսկովյան	MSKV	B											
Մասիս Տաբակ	MSTB	B											
Մետրո	MTSH	B											
Նոյեմբերյանի Տրիկոտաժի Ֆաբ.	NBTF	B											
Նեյրոն	NERN	B											
Պլաստոն	PLAS	B											
Պեր. Սմսկ. Գինեկ. Կենտրոն	PMGK	B											
Քարերկ Կարե	PORN	B											
Ռաստր Գործ.	RSTR	B											
Ռեզիստոր	RZTR	B											
Սելեն	SELN	B											
Շինամեքենամարդագործ	SHMN	B											
Եր. Շուրեն Տեքստիլ ԿՍ	SHTK	B											
Կաստրոլ Սարք. Գործ.	SKSG	B											
Սոսնակ	SSKN	B											
Ռեստորանային Գործ.	STAN	B											
Տոմ	TASP	B											
Տարոն	TAVR	B											
Ուկրշին	UKSH	B											
Սոնդորանի Բանկ	UNBK	B											
Վանաձորի Կոշիկի Ֆաբ.	VAKF	B											
Վեդիանային Էլեկտրական. Գործ.	VEVG	B											
Վշտունիք	VSHK	B											
Փոստանիշերի Գործ.	VTMG	B											
Երեւան, Կաթնայր	YKHQ	B				8,000.0	8,000.0	1,000					
Եր. Պահածոների Գործ.	YPHG	B											
Եր. Ռելեի Գործ.	YRLE	B											
Զանգեզուրի Ցիտրուսային Գործարան	ZNGP	B											

* Շրջանառության գնանշումները տրամաբանորեն հարթեցված են հարթի ներսի տեղեկություն առեւտրային նստաշրջանի փակման դրությամբ: Բոլոր գները ՀՀ դրամով:
** 4 կամ ավելի հարթակներ ունեցող բաժնետոմսերի գնի դրության հաստատուն անվանական բաժնետոմսի հարաբերությունն է: Այն դեպքում, երբ 4 կամ ավելի բացի նշված է CO, արդյունքը ՍՊԸ-ի բաժնետոմս է:
Այլ տեղեկությունները հրատարակվում են ինտերնետային էջում www.armex.am

© Armex

«Գին» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 18. 12. 2001 Գինը՝ 100 դրամ